

**ԱՐԵՎՄՏԱՅԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ
Գագիկ Տեր-Հարությունյան**

Համաձայն մամուլի հաղորդագրությունների, ներկայումս աշխատանքներ են տարվում Արեւմտահայության համագումար կազմակերպելու ուղղությամբ: Ենթադրվում է նաեւ, որ համագումարը կարող է ձեւավորել Արեւմտյան Հայաստանի կառավարություն: Վերլուծական հանրության վերաբերմունքն այդ նախաձեռնության նկատմամբ միանշանակ չէ: Ոմանց կարծիքով՝ նման գաղափարի գործնական իրագործումը, հաշվի առնելով Սփյուռքին բնորոշ տարակարծիքությունը, «արեւմտահայություն» հասկացության որոշակի առաձգականությունը, ինչպես նաեւ՝ այսօրվա թուրքական հզոր պետության առկայությունը, իրատեսական չէ: Մյուսները խնդիրն ընկալում են լավատեսորեն՝ հիմնավորելով իրենց մոտեցումը Հայ դատը հետապնդող մի նոր ձեւաչափ ստեղծելու անհրաժեշտությամբ, ապագայում Թուրքիայի հնարավոր մասնատմամբ եւ այլն: Միեւնույն ժամանակ, պետք է ընդունել, որ Արեւմտահայության համագումար հրավիրելու հետ կապված հարցերի քննարկումները կրում են մասնավոր բնույթ, մինչդեռ խնդիրը համագալսի բնույթի է:

Համառոտ նախապատմություն

Ինչպես հայտնի է, 1917 եւ 1919 թվականներին տեղի են ունեցել Արեւմտահայության 1-ին (Թիֆլիս) եւ 2-րդ (Երեւան) համագումարները, իսկ 1919 եւ 1920թթ.՝ 1-ին եւ 2-րդ Հայ ազգային համագումարները (Փարիզ): Հետագայում, նախորդ դարի 70-ական թվականներին, վերապատվելի Ջեյմս Կառնուոյանը (Շվեյցարիա) փորձ կատարեց շարունակել այդ ավանդույթը եւ երկու անգամ կազմակերպեց հավաքներ, որոնք բովանդակային առումով պետք է հանդիսանային արեւմտահայության եւ ազգային համագումարների իրավահաջորդները: Սակայն այդ միջոցառումները որեւէ շոշափելի արդյունք չտվեցին, եւ Կառնուոյանը դադարեցրեց գործունեությունն այդ ուղղությամբ:

Սփյուռքահայության միավորման եւ Արեւմտյան Հայաստանի կառավարություն կազմելու գաղափարները վերակենդանացան անցյալ

դարի 90-ականների սկզբին. այդ թեման սկսեց արժարժվել հանրությունում եւ մամուլում: Սակայն գործնական զարգացումներ այդ ուղղությամբ չհետեւեցին: Հետագայում (2002թ.) Ռուսաստանի հայերի միության շրջանակներում հիմնվեց «Համաշխարհային հայկական կոնգրես» կազմակերպությունը, որը, սակայն, թե՛ առարկայական, թե՛ ենթակայական պատճառներով լիարժեք չի գործում:

Վերջին տարիներին այդ գործին սկսել է հետամուտ լինել Հայաստանի եւ Սփյուռքի հասարակական գործիչներից ու գործարարներից կազմված մի խումբ, որին կարծես թե հաջողվել է կատարել մի քանի արդյունավետ քայլեր:

Աշխարհաքաղաքական համատեքստ

Արեւմտահայության եւ Արեւմտյան Հայաստանի հետ կապված վերոնշյալ հարցադրումները, բնականաբար, էական առնչություն ունեն թուրքիայի ապագայի հետ: Ինչպես հայտնի է, արդի թուրքիան մասամբ ընդգրկված է Մերձավոր եւ Միջին Արեւելքում, այսպես կոչված, «ղեկավարվող քառս» ստեղծելու ամերիկյան մեդիապահպանողականների կողմից մշակված նախագծում: Այդ պետության նկատմամբ կիրառվում է Բեռնար Լյուիսի անունը կրող էթնիկ եւ դավանական տարանջատումների վրա հիմնված ամերիկյան պաշտոնական, դոկտրինալ բնույթ կրող ռազմավարությունը: Համաձայն այդ մոտեցման՝ մասնավորապես Մերձավոր Արեւելքի գրեթե բոլոր երկրները պետք է մասնատվեն բնակչության ազգային եւ կրոնական հատկանիշների հիման վրա եւ վերածվեն ոչ մեծ (եւ այդ պատճառով՝ դրսից դյուրին կառավարվող) պետական կառուցվածքների: Անշուշտ, այդ գործընթացը կարող է եւ հանգեցնել տարածաշրջանում քառտիկ իրադրության առաջացմանը, ինչի ապացույցն է այն իրավիճակը, որը ձեւավորվել է Իրաքում: Նման ռազմավարության նպատակն է.

- ❖ վերահսկելի դարձնել աշխարհաքաղաքական առումով կարելորդ զորք գրավող եւ էներգակիրներով հարուստ տարածաշրջանը,
- ❖ արգելակել իսլամական աշխարհի հնարավոր միավորումն ու հզորացումը,
- ❖ անվտանգության լրացուցիչ երաշխիքներ տրամադրել Իսրայելին:

Այս ամենի կապակցությամբ տեղին է հիշել, որ որոշ գնահատականների համաձայն՝ թուրքիայի բնակչության 30-40%-ը այլազգի է:

Այստեղ խոսքը միայն քրդերի մասին չէ, չնայած որ նրանք հիմնական ազգային փոքրամասնությունն են, եւ այսօր հենց քրդական գործոնով է պայմանավորված նախկինում ամուր Վաշինգտոն-Թեյ Ավիվ-Անկարա դաշնակցային հարաբերությունների խարխուլումը: Այդ երկրում բնակվում են իրենց ազգությունը, լեզուն եւ դավանանքը փոխած բազմաթիվ հայեր եւ հույներ, ինչպես նաեւ այլ ազգությունների ներկայացուցիչներ, որոնց թիվը, համաձայն փորձագետների, հասնում է մի քանի միլիոնի: Հայտնի է նաեւ, որ այլադավան եւ այլալեզու հայերի ու հույների հետ, նրանց «վերահսկելի դարձնելու» նպատակով, «աշխատում» են թուրքական հակահետախուզական մարմինները: Դրանց հետ մրցակցում են արեւմտյան, իսկ որոշ նախանշաններով՝ նաեւ այլ երկրների հատուկ ծառայությունները, որոնք նույնպես փորձում են իրենց ազդեցության տակ դնել Թուրքիայի ազգաբնակչության այդ հատվածը: Արդյունքում՝ Թուրքիայում նշմարվում են ազգային խնդիրների հետ կապված հակասությունների սրացման միտումներ, որոնք պայմանավորված են ոչ միայն հայտնի քրդական գործոնով: Այս առիթով նկատենք, որ այդ երկրում բնակվող այլադավան ու այլալեզու հայերը փաստացիորեն ներկայացնում են արդի արեւմտահայությունը:

Ինչպես արդեն վերը նշել ենք, Մերձավոր եւ Միջին Արեւելքում ամերիկյան ռազմավարությունն ուղղված է նաեւ արմատական իսլամի դեմ: Նկատենք, որ ԱՄՆ-ում գործում են հետազոտական կենտրոններ, որոնց նպատակներից է նաեւ իսլամն ավելի հանդուրժողական դավանանքի վերածելու մեխանիզմների մշակումը: Այդ համատեքստում բնորոշ է 2001-2002թթ. ոչ արմատական իսլամական կուսակցությունների ձեւավորումը, որոնք կրում էին նույն Արդարություն եւ զարգացում անունը եւ որոնք գրեթե միաժամանակ ասպարեզ իջան Թուրքիայում, Սարոկոյում եւ Բահրեյնում (այդ քաղաքական գործընթացը վերագրվում է ամերիկացիներին, իսկ որոշ աղբյուրներ նշում են նաեւ այդ տեխնոլոգիայի հեղինակին՝ այն տարիների ԱՄՆ պաշտպանության փոխնախարար Փոլ Վուլֆովիցին, որը նեոպահպանողական ընտրանու ամենակարկառուն ներկայացուցիչներից է): Համաձայն ամերիկյան մոտեցումների, աշխարհիկ՝ քեմալական ավանդույթներ ունեցող Թուրքիայում ներկայիս հանդուրժողական իսլամիստների իշխանության գալը, մասնավորապես, պետք է հակազդի Իրանի՝ որպես իսլամական աշխարհի առաջատարի, ձեւավորմանը: Պետք է նկատել, որ այս համատեքստում ամերիկյան ծրագրերում Թուրքիային փաստորեն վերագրվում է երկակի դերակատարում: Այդ տերությունը որոշակի հավասարակշռող գործոն պետք է դառնա իսլամական աշխարհում եւ մասնավորապես Մերձավոր եւ Միջին

Արեւելքում, իսկ Թուրքիայի ԵՄ-ին անդամագրումը պետք է արգելակի եվրոպական երկրների քաղաքակրթական եւ աշխարհաքաղաքական հենքի վրա միավորումը:

Այս ամենը վկայում է, որ ԱՄՆ-ի կողմից Թուրքիային մինչ այժմ հատկացվող աշխարհաքաղաքական դերակատարումը փոխվում է: Սա խոսում է այն մասին, որ զարգացման որոշ սցենարների պարագայում Միացյալ Նահանգները կնախընտրեն տեսնել Թուրքիան թուլացած եւ անզամ մասնատված: Առանց մանրամասնելու նկատենք, որ այդօրինակ սցենարը կարող է ընդունելի լինել նաեւ աշխարհաքաղաքական այլ դերակատարների համար:

Անշուշտ, նման զարգացմանը հակազդում է առաջին հերթին թուրքական ընտրանին, որը սկսել է վարել ավելի անկախ եւ հաշվենկատ քաղաքականություն: Սակայն հաշվի առնելով «դեկավարվող քառս»-ի հենքում ընկած անորոշությունները, ինչպես նաեւ նեոպահպանողական նախագծերին բնորոշ հակասություններն ու ռիսկերը, Թուրքիայի մասնատման սցենարները տեսականորեն ունեն որոշակի հավանականություն:

Ամփոփում

Այսպիսով, ապագայում Թուրքիայի, թեկուզ եւ տեսականորեն, հնարավոր մասնատման սցենարը, քաղաքական տեխնոլոգիաների տեսանկյունից, Արեւմտյան Հայաստանի նկատմամբ պահանջներ ներկայացնող կազմակերպության առկայությունը դարձնում է անհրաժեշտ:

Նշենք նաեւ, որ Արեւմտահայության համագումարի ձեւաչափի ստեղծումն ունի նաեւ ընթացիկ, մարտավարական նշանակություն: Այն կարող է վերածվել մի նոր ցանցային կառույցի, որը կարող է ՀՀ իշխանությունների, Ամերիկայի Հայկական համագումարի եւ Հայ դատի գրասենյակների հետ կոորդինացված որոշակի գործողություններ իրագործել: Ակնհայտ է նաեւ, որ նման նախագծի իրականացումը պահանջում է զգալի մարդկային, տեղեկատվական, նյութական եւ տարաբնույթ այլ ռեսուրսների ներգրավում:

**20-ՐԴ ԴԱՐԻ ԵՆԻՉԵՐԻՆԵՐԸ.
ԽԵՂՎԱԾ ՃԱԿԱՏԱԳՐԵՐ
Ռուբեն Մելքոնյան**

Օսմանյան կայսրությունում դարեր շարունակ գործել է ենիչե-րիների ինստիտուտը, որը հիմնված էր, այսպես կոչված, «արյան հարկի» (դելչիրմե) վրա: Կայսրության ոչ մուսուլման բնակչությունից որպես հարկ ժամանակ առ ժամանակ հավաքվում էին առողջ, ամրակազմ տղա երեխաներ, որոնք ստանում էին իսլամական ու ռազմական համակողմանի կրթություն, եւ հետագայում նրանցից ընտրյալները կազմավորում էին ենիչերիական զորամիավորումները: Վաղ հասակից մոլեռանդ իսլամի ոգով դաստիարակվող ոչ մուսուլման երեխաները, որոնց մոտ գրեթե ամբողջությամբ ոչնչանում էր էթնիկ ինքնագիտակցությունը, հետագայում դառնում էին ամենամոլի եւ դաժան զինվորներ, ինչպես նաեւ զբաղեցնում պատասխանատու դիրքեր:

Չայտնի է, թե ինչ մեծ դեր են ունեցել ենիչերիական զորամիավորումները Օսմանյան կայսրության պատմության ընթացքում՝ ներքաղաքական դավադրությունների ժամանակ եւ այլանման իրավիճակներում: Բազմաթիվ աղբյուրների վկայությամբ՝ դելչիրմեներ անցկացվել են նաեւ հայաբնակ վայրերում, եւ բնական է, որ մենք նույնպես եղել ենք «արյան հարկատուներ»: Օսմանյան կայսրության պատմության ընթացքում տեղ գտած բազմաթիվ բիրտ երեւույթներ իրենց որոշակի դրսեւորումներն են ունեցել նաեւ կայսրության անկման տարիներին եւ, մասնավորապես, Չայոց ցեղասպանության ժամանակ: Օրինակ, Օսմանյան կայսրությունն իր գոյության ամբողջ ընթացքում հայտնի է եղել ստրկավաճառության հարուստ ավանդույթներով, եւ այդպիսի բազում փաստեր արձանագրվել են նաեւ Մեծ եղեռնի տարիներին:

Առանձին եւ լուրջ ուսումնասիրության թեմա է Չայոց ցեղասպանության ընթացքում առեւանգված կամ ծնողների կոտորվելուց հետո մի կերպ փրկված հայ երեխաների հարցը: Չայտնի է, որ փրկված երեխաների մի մասին մուսուլմանները որդեգրել կամ, ավելի ճիշտ կլինի ասել, վերցրել են ձրի աշխատուժ ունենալու եւ նման այլ նպատակների

համար: Սակայն առկա են որոշակի փաստեր, որոնք թույլ են տալիս խոսել որբ հայ երեխաներից կազմված Օսմանյան կայսրության, թերեւս, վերջին եւ Թուրքիայի Հանրապետության առաջին ենիչերիների մասին:

Այսպես, հայտնի է, որ տխրահռչակ թուրք զորավար Քազըմ Քարաբեքիրը, արեւելյան ճակատում հավաքելով որբ, անտուն, անխնամ մնացած հայ երեխաներին, նրանց տալիս է ռազմական բազմակողմանի կրթություն, ինչպես նաեւ դաստիարակում մոլի «թուրքականության» ոգով: Հենց այս երեխաներից է հետագայում կազմավորվում, այսպես կոչված, «Գյուրբուզներ օրդուսու» զորամիավորումը, որը թարգմանաբար նշանակում է «ամրակազմների բանակ»: Թուրքական աղբյուրները մանկահավաքության այս գործընթացը ներկայացնում են որպես Քարաբեքիրի «մարդասիրական զգացումների» դրսեւորում, որ իբր այդ ամենը նա արել է՝ ելնելով հումանիստական նկատառումներից: Որոշ աղբյուրներ էլ նշում են, թե վերոհիշյալ բանակում ոչ բոլորն են եղել հայ երեխաներ, եւ այնտեղ հավաքվել են նաեւ հայերի կողմից կոտորված թուրքերի որբ երեխաները: Ինչեւէ, հայտնի է նաեւ, որ «Գյուրբուզներ օրդուսու»-ի շատ անդամներ հետագայում որոշակի դիրքեր են գրավել թուրքական զինվորական համակարգում, բայց այդ մասին կոնկրետ տվյալների մենք դեռեւս չենք տիրապետում:

Սույն հոդվածում կենտրոնանալու ենք Թուրքիայի ռազմական համակարգում բարձր դիրքերի եւ մեծ ճանաչման հասած ու վերջերս բավական աղմուկ հանած Աթաթուրքի հոգեզավակ Սաբիհա Գյոքչենի անվան շուրջ: Առանց չափազանցության կարելի է ասել, որ Սաբիհա Գյոքչենը լեգենդար անուն է շատ թուրքերի համար: Նա առաջին թուրք կին օդաչուն է, ավելին՝ աշխարհի առաջին ռազմական կին օդաչուն, որը երկար տարիներ կարելու դիրք է զբաղեցրել թուրքական ռազմաօդային ուժերի համակարգում, ճանաչվել է աշխարհի հայտնի 20 օդաչուներից մեկը, ընդ որում՝ այս տիտղոսին արժանացած առաջին եւ միակ կինն է: Բավական է նշել, որ ներկայումս նրա անունով օդանավակայան կա Թուրքիայում: Սակայն ամենակարեւոր հանգամանքը, որ հստակ առանձնացվում է նրա կենսագրության մեջ, այն է, որ 1938թ. Դերսիմի ալեւիների ապստամբության ժամանակ Սաբիհան օդանավով ռմբակոծել է ապստամբներին, ինչը մեծապես օգնել է թուրքական բանակին՝ վերահսկողության տակ վերցնել Դերսիմը եւ ճնշել խռովությունը: Ժամանակի թուրքական մամուլը բազմիցս մեծ

դրվատանքի է արժանացրել «հերոս Աթաթուրքի» «հերոս աղջկան»՝ հավելելով, որ նա որպես արժանավոր զավակ շարունակում է հոր գործը:

Թուրքական պաշտոնական աղբյուրներից տեղեկանում ենք, որ Սաբիհա Գյոքչենը ծնվել է 1913թ. մարտի 22-ին Բուրսայում, հայրը Չաֆրզ Մուսթաֆա Իզզեթն է, մայրը՝ Չայրիյեն: Վաղ տարիքում կորցրել է ծնողներին եւ մնացել ավագ եղբոր խնամքի տակ: Այնուհետեւ՝ 1925թ. Բուրսա ժամանած Քեմալ Աթաթուրքը որդեգրում է աղջկան եւ տանում Անկարա: Չենց Թուրքիայի Հանրապետության առաջին նախագահի կանքով էլ Սաբիհան ստացել է կրթություն՝ ռազմաօդային ասպարեզում: Ամենեւին էլ պատահական չէ նաեւ, որ Աթաթուրքը նրան տվել է Գյոքչեն (երկնային) ազգանունը, երբ 1934թ. Թուրքիայում օրենք է մտցվել ազգանուն ունենալու մասին:

Սակայն մի շարք այլ եւ գերազանցապես հայկական աղբյուրներ պնդում են, որ Սաբիհա Գյոքչենը իրականում այն հազարավոր հայ երեխաներից մեկն է, որ Հայոց ցեղասպանության ժամանակ կորցնելով ծնողներին՝ հայտնվել է որբանոցում:

Այսպես, 1972թ. Բեյրութում տպագրված «Լեռ եւ ճակատագիր» գրքում սփյուռքահայ գրող Սիմոն Սիմոնյանը փոքր-ինչ գեղարվեստականացված ներկայացնում է Սաբիհա Գյոքչենին՝ նշելով, որ նրանց ընտանիքը Այնթափի Ջիբին գյուղից է, եւ բերում է ընտանիքի անդամների անունները: Սակայն Սաբիհա Գյոքչենի վերաբերյալ աղմկահարույց նյութը, որը տպագրվեց 2004թ. փետրվարի 6-ին Ստամբուլի «Ակոս» թերթում, արժանացավ սպասվածից ավելի բուռն արձագանքի: Թերթում հայաստանաբնակ Հռիփսիմե Սեբիլջյանը հայտարարում էր, որ Սաբիհա Գյոքչենը իր հարազատ մորաքույրն է եւ այնուհետեւ ներկայացնում է իր մոր, այսինքն՝ Սաբիհայի քրոջ պատմությունը: Այսպես, ըստ Հռիփսիմե Սեբիլջյանի մոր՝ Տիրուհու, իրենք բնիկ այնթափցիներ են, մայրը Մարիամ Սեբիլջյանն է, հայրը՝ Ներսես Սեբիլջյանը, որը սպանվել է 1915թ.: Ինքը՝ Տիրուհին, ունեցել է հինգ եղբայր ու մեկ քույր՝ Խաթունը, որը հենց նույն Սաբիհա Գյոքչենն է: Ցեղասպանությունից հետո մեծ ընտանիքը, ինչպես շատ ուրիշներ, ցրվել է, եւ Խաթուն ու Տիրուհի քույրերը հայտնվել են որբանոցում, որտեղից էլ Աթաթուրքը վերցնում է Խաթուն Սեբիլջյանին կամ վերանվանյալ Սաբիհա Գյոքչենին:

Այս ամենը՝ ընդհուպ մինչեւ որբանոցում իր եւ քրոջ բաժանումը, հետագայում իր զավակներին է պատմել Տիրուհի Սեբիլջյանը, որը

1946թ. Սիրիայից Հայաստան գաղթելուց հետո էլ շարունակել է փնտրել արդեն մեծ ճանաչում գտած քրոջը, սակայն նրա բոլոր փորձերն անհաջողության են մատնվել: Ի դեպ, ավելորդ չէ նշել, որ ներկայումս Ջիբրին գյուղի ինտերնետային կայքում տեղադրված են մոտ 30 հայ կանանց լուսանկարներ ու կենսագրական մանրամասներ: Դրանք այն հայ աղջիկներն ու կանայք են, որոնք պահ են տրվել կամ ամուսնացել են մուսուլմանների հետ: Այդ ցուցակում հանդիպում ենք ջիբրինցի Մարիամի լուսանկարին, որը շատ նման է «Ակոս» թերթում տպագրված Սաբիհա Գյոքչենի մոր՝ Մարիամի լուսանկարին: Սակայն, մեր կարծիքով, Սաբիհա Գյոքչենի հայ լինելու մասին ամենավստահելի եւ արժանահավատ աղբյուրը հայտնի թուրքահայ լեզվաբան, պատմաբան Բարս Թուղլաջիի (Բարսեղ Թուղլաջյան)՝ այդ առիթով արած հայտարարությունն է: Հայտնի է, որ նա ժամանակին մտերիմ հարաբերություններ է ունեցել Սաբիհա Գյոքչենի հետ ու «Ակոսի» աղմկահարույց հոդվածից ե՛լ առաջ, ե՛լ հետո պնդել է, որ իրականում հայտնի օդաչուն եւս իմացել է իր իսկական ծագման մասին: Սաբիհա-Խաթունը նույնիսկ սովորել է մի քանի հայերեն բառ, որոնք օգտագործել է Բարս Թուղլաջիի հետ զրուցելիս:

Երբ համադրում ենք այս բոլոր փաստերը, ապա շատ հավանական է դառնում, որ իրականում Աթաթուրքի հոգեզավակ, հայտնի Սաբիհա Գյոքչենը հայուհի է եւ Հայոց ցեղասպանության հազարավոր իսլամացած որբերից մեկը: Սաբիհա Գյոքչենի հայկական արմատներ ունենալու կարելու փաստարկ կարելի է համարել նույն Սիմոն Սիմոնյանի բերած այն տեղեկությունը, թե հայտնի օդաչուն տառապել է «երեւանյան» կոչված հիվանդությամբ, եւ Աթաթուրքը մահից կարճ ժամանակ առաջ ասել է իր հոգեզավակին, որ նա չի կարող բուժվել այդ հիվանդությունից եւ դա նրան ուղեկցելու է ամբողջ կյանքում:

«Ակոս»-ում տպագրված «Սաբիհա Գյոքչենի գաղտնիքը» հոդվածի հեղինակներն էին Հրանտ Դինքը եւ Տիրան Լոքմազյոզյանը, ու հենց այդ հրապարակումից հետո Թուրքիայում սկսվեց հալածանքների եւ քննադատությունների մի մեծ ալիք, որը հետագայում ավելի բեւեռվեց Հրանտ Դինքի անձի վրա: Հոդվածը մի քանի օր հետո արտատպեց թուրքական «Հյուրիյեթ» թերթը, եւ այն երկար ժամանակ մնաց թուրքական մամուլի, քաղաքական գործիչների, հասարակության ուշադրության կիզակետում: Բանը հասավ այնտեղ, որ պաշտոնական խիստ հայտարարությամբ հանդես եկավ Թուրքիայի գլխավոր սպայակույտը:

Սակայն, եթե զերծ մնանք անհարկի զգացմունքայնությունից, ապա կարող ենք ասել, որ Սաբիհա Գյոքչենը կամ Խաթուն Սեբիլջյանն իր կենսագրությամբ եւ ռազմաօդաչուական գործունեությամբ, որքան էլ կոպիտ հնչի, համապատասխանում է ենիչերի ձեւակերպմանը: Նա վաղ հասակում թուրքացվել ու իսլամացվել է, նրան տվել են ռազմական կրթություն եւ դաստիարակել «թուրքերի հոր» աղջիկը լինելու հոգեբանությամբ: Ազգային ինքնագիտակցության այն ենթադրյալ առկայծումները, որոնց մասին վկայում են տարբեր աղբյուրներ, միշտ ստորադասվել են թուրքական առաջին օդաչուի, այլ խոսքով՝ ենիչերիի կերպարին: Ի դեպ, ասվածի ուղղակի կամ անուղղակի ապացույցը կարելի է համարել 2005թ. Ստամբուլում հրատարակված Մուրաթ Քահրամանի «Գիչ» վեպում սպրդած որոշ փաստագրական պատմությունները: Այդ գրքում ներկայացվում են Սաբիհա Գյոքչենի ծագման մասին նույն տվյալները, որոնք մեջբերվել են վերելում: Յեղի-նակը «Գիչ»-ում անդրադառնալով նաեւ 1938թ. Դերսիմի ապստամբությանը՝ նկարագրում է թուրքական բանակի վայրագությունները, ինչպես նաեւ խոսում ապստամբներին օդից ոչնչացնող Աթաթուրքի աղջկա մասին: Սակայն ուշագրավ է, որ դա արվում է Յայոց ցեղասպանության ժամանակ մահից մի կերպ փրկված եւ Դերսիմում ապաստանած հայի՝ Քալոյի շուրթերով: Ըստ Քալոյի, Սաբիհա Գյոքչենի նետած ռումբերը ոչնչացնող հարվածներ էին հասցնում ոչ միայն ավելի-քուրդ ապստամբներին, այլ նաեւ տակնուվրա էին անում 1915-ի ցեղասպանության ժամանակ Դերսիմի ավելիների մոտ ապաստանած հայերի հոգեւոր աշխարհը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Օսմանյան կայսրության վերջին եւ Թուրքիայի Հանրապետության առաջին տարիներին, շարունակելով «փառավոր» անցյալի ավանդույթները, ձեւավորվել են տիպիկ ենիչերիական կերպար ու էություն ունեցող ռազմական ստորաբաժանումներ, ինչպիսին են Քազիմ Քարաբեքիրի «ամրակազմների բանակը» եւ առանձին անհատներ, որոնցից, թերեւս, ամենահայտնին Սաբիհա Գյոքչենն է:

Միաժամանակ, եթե փորձենք հասկանալ Սաբիհա Գյոքչենի հայ լինելու մասին հողվածի տպագրվելուց հետո բարձրացված աղմուկի խորքային պատճառները, ապա կտեսնենք, որ թուրքական խորհրդանիշներից մեկի՝ հայտնի օդաչուի իրական էթնիկ պատկանելության քողազերծումն ուղղակիորեն կապված է ժամանակակից թուրքական պետության անվտանգության եւ գոյության հետ: Հենց սրա հետ է պետք

կապել նաև Թուրքիայի գլխավոր սպայակույտի կոշտ հայտարարությունը: Ստի, կեղծիքի եւ արյան վրա ստեղծված պետության մեջ կեղծ են նաև խորհրդանիշները: Եվ եթե գլխավոր խորհրդանիշներից մեկն ապացուցվում է, որ թուրքերի պատկերացմամբ՝ թշնամի «գյավուր» հայ է, ապա նրանց ինքնագիտակցության մեջ ինչ-որ բան, այնուամենայնիվ, կոտրվում է: Միլիոնավոր թուրքեր, ովքեր մեծացել են հայերի հանդեպ ատելության մթնոլորտում եւ որպես խորհրդանիշ պատկերացրել Սաբիհա Գյոքչենին, հոգեբանական անհարմարություն են զգում, քանի որ պարզվում է, որ իրենց ազգային վեհության սիմվոլն իրականում հայ է կամ այլ ձեւակերպմամբ՝ հայն է եղել նրանց խորհրդանիշը: Այստեղ տեղին է մեջբերել նաև Հրանտ Դինքի այն միտքը, որ եթե թուրքական պետությունը մի օր կործանվի, ապա դա կլինի ոչ թե զենքի, այլ էթնիկ ինքնության ճգնաժամի միջոցով:

ՄԱՅՐԻՎ, ՄԵՆՔ ՅԱՅ ԵՆՔ

*Չարցագրույց Ստամբուլի Կետիկփաշա թաղամասի
Չայ Ավետարանական եկեղեցու հովիվ, վերապատվելի
Գրիգոր Աղաբալօղլուի հետ*

Չարց – Վերապատուելի, խնդրում եմ պատմեք Ձեր մասին, ե՞րբ եւ որտե՞ղ էք ծնուել...

Պատ. – Ծնած եմ 1957թ. Արաբկիր քաղաքին մեջ...

Չարց – Փաստօրէն, եղեմնից չորս տասնամեակ անց Արաբկիրում դեռ հայե՞ր կային: Ինչպէ՞ս է փրկուել Ձեր ընտանիքը:

Պատ. – Միայն Արաբկիրին մեջ չէ, որ փրկուած հայեր կային: Այն ատենները կառավարութիւնը օրէնք հաներ է, թէ այն հայ ընտանիքները, ուր եզակի մասնագիտութեան վարպետներ կային, այդ ընտանիքները դուրս չհանեն: Դուռերու ամբարները նշաններ դրին, ըսին, որ այս մարդիկը պէտք չէ հանել: Մեր ընտանիքը այդպէս փրկուած է. մեր մէկ կողմը կենդանիներու բժիշկ է եղեր, միւս կողմը՝ շատ լաւ շինարար...

Մէկ մասն ալ կայ, որ ժողովուրդը սիրելով պահեր է: Ամեն քաղաքի մեջ այսպէս չեղաւ, սակայն քանի մը տեղեր պահուեցան:

Յինները կըսէին, որ Արաբկիրի 100-էն 90-ը հայ են եղեր, բայց ջարդէն վերջ քիչ են մնացեր: Ես 1974թ. դուրս եկայ, 5-6 հայ ընտանիք կային, հիմա՝ մէկ ընտանիք:

Արաբկիր լիսէ չկար, ես Մալաթիա գացի լիսէ սորվելու: Ես լաւ աշակերտ էի, բայց օր մը ուսուցիչը եկաւ եւ ըսաւ, թէ ինչպէս կըլլայ, որ կեավորը մուսուլմանէն աւելի նիշ առնէ, սկսաւ զարնել, ես ալ իրեն զարկեցի:

Մալաթիայի լիսէն աւարտեցի, վերջը Իստանբուլ եկայ, Իստանբուլի համալսարանը մտայ, սորվեցի լիսէի «Թուրքիայի պատմութեան ուսուցիչ» դասընթացը:

Կառավարութիւնէն գործ ուզեցի: Ինծի հետ աւարտողները աշխատանք գտան, սակայն ինծի ըսին, թէ տեղ չիկայ, երեւի հայ էի, անոր համար տեղ չիկար: Թերեւս կը մտածէին. ինչպէ՞ս հայը Թուրքիայի պատմութիւն պիտի սորվեցնէ: Ստիպուած ոսկերչութիւն սորվեցայ: 10 տարի ոսկերչութիւն ըրի, 1987թ.-ին սկսեցայ Աստօյ գործին մեջ մտնել, մեծ փորձութիւնէն յետոյ որոշեցի Աստօն ծառայել:

Չարդ – Ի՞նչ փորձութիւն, կը պատմէ՞ք...

Պատ. – Մենք ընտանիքով թունաւորուեցանք, 2 երեխաներս՝ 6 եւ 3 տարեկան, կորսնցուցի, ես ու կինս փրկուեցանք: Տունին մէջ ածուխ կը վառէինք, ածուխի գազը ներս տուեր է, միւս օրը կէսօրէն վերջը ամենուս գտան մեր տունին մէջ, երեխաներս մեռած էին, ինձի ու կնոջս հիւանդանոց տարին:

Չիմա երկու երեխա ունիմ՝ 19 տարեկան աղջիկ եւ 16 տարեկան տղայ:

Այս կեանքը ինձի նուէր է, պէտք է Աստուծոյ ծառայեմ:

Արաբկիրի մէջ եկեղեցի չիկար, հայկական դպրոց չիկար, մէկը չիկար, որ մեզի սորվեցներ, գիտցներ Յիսուսի մասին: Երբ թուրքերէն կարդացի Աւետարանը, Քրիստոսի զօրութիւնը տեսայ, Քրիստոսի միջոցով յաւիտենական կեանքը գիտցայ: Շատ հայեր կան, որ Քրիստոսի արիւնին զօրութիւնը չեն գիտեր:

Շատ նեղութիւններ քաշեր էի Անատոլիայի մէջ, մեզի կեավուր կըսէին: Չիմա, ըսի, զօրաւոր զէնք կայ:

Ես հայերէն չէի գիտեր, 5 տարի եղաւ, որ այսչափ սորվեցայ: Արաբկիր մէկ բառ հայերէն կը խօսէինք, 2 բառ՝ թուրքերէն:

Ես Աւետարանը նոր կարդացած էի, մէկ անգամ Մեսրոպ սրբազանին ըսի, որ այս թիւի մէջ այսպէս գրուած է, ըսաւ. «Աւետարանականները այդպէս կը մտածեն, մենք՝ առաքելականներս, տարբեր կը մտածենք»: Գիտցայ, որ աւետարանականներ կան, գացի աւետարանականները գտայ Կետիկփաշա, տեսայ մարդիկ Սուրբ գիրք կը կարդան. ըսին՝ եկուր, նստէ, մենք ալ սերտողութիւն կընենք: Այդ օրէն սկսեցայ երթալ Կետիկփաշայի Չայ Աւետարանական եկեղեցի:

Չարդ – Երբ ձեռնադրուեցի՞ք:

Պատ. – Ես պատուելի ձեռնադրուեցայ 2002թ.-ին:

Չարդ – Վերապատուելի, քանի՞ հոգի է յաճախում Ձեր եկեղեցի:

Պատ. – Երբ ես գացի, 25 հոգի էր, հիմա, փառք Տիրոջը, ամառները 100 հոգի, ձմեռները 150 հոգի կը հաւաքուի: Ամեն ազգերէն կուգան: Մեր եկեղեցիի մէջ 4 լեզուով պաշտամունք կըլլայ, կիրակի օրերը՝ թուրքերէն, ռուսերէն, հայերէն, պարսկերէն: Ռուսերէն կընենք, որովհետեւ տարբեր ռուսախօս երկիրներէն եկածներ կան: Սոլդովայէն եկածներու մէջ շատ են գազաուզները: Գազաուզները ծագումով թուրք են, բայց քրիստոնէայ են, Իստանբուլ են եկեր աշխատանք ճարելու համար:

Կեսօրէն վերջ Ժ. 2-ին հայաստանցի հայերու համար պաշտամունք կընենք՝ մօտ 30 հոգի են:

Ժ. 5-ին կուզան պարսիկները, որ իսլամ են, եւ կուզեն քրիստոնեայ դառնալ, կը մկրտենք, քրիստոնեայ կը դառնան, ուրիշ երկիրներ կերթան: Սերտողութիւն կընեն: Պարսկաստան անոնք կը վախճան եկեղեցի երթալ:

Չարց – Իսկ Ստամբուլուն կամ Թուրքիայի այլ քաղաքներուն ուրիշ Աւետարանական եկեղեցիներ կա՞ն:

Պատ. – Իստամբուլի մէջ 20, Անկարա՝ 5, Իզմիր՝ 5, Ադանա՝ 2, Դիարբեքիր, Մերսին, Սամսուն՝ 1-ական թուրքական Աւետարանական եկեղեցիներ կան: Մէջերնին շատ հրաշքներ կըլլան, հիւանդներ կը բուժուին, երազներ կը տեսնեն: Մէկ հոգի թուրք ռադիո բացեր է, թուրքերէն քարօզ կըլլայ, լսողներու մեծամասնութիւնը իսլամ է:

Չարց – Իսկ Թուրքիայի խորքերից իսլամ հայեր գալի՞ս են Ձեզ մօտ քրիստոնէութիւն ընդունելու:

Պատ. – Գաւառներէն իսլամացած հայեր կուզան Իստամբուլ, մէկ մասը քրիստոնէութիւն կընդունի, ըսելով, որ մեր հայրերը վախճն իսլամ դարձեր են, հիմա ազատ ենք, քրիստոնեայ պիտի դառնանք, միւս մասը կըսէ, որ վախճն չէ, որ իսլամ դարձած են, որովհետեւ իսլամը ճիշտ ընդուներ են: Մէկ մասն ալ Անատոլիա կապրին, իսլամացած են, կըսեն մեր գիւղը հայ է, միւս գիւղն ալ հայ է, մենք իրարու աղջիկ կուտանք, որ դուրսէն մարդ չըմտնէ մեր մէջ, եթէ կռիւ ըլլայ, կըսեն՝ «կեա՛վուրի չոճուխ»: Մէկ մասը գիտեն, որ հայ են եղեր, բայց կը վախճան բարձրաձայն ըսել, մանաւանդ, եթէ պետական ծառայութեան մէջ են, կը վախճան, որ աշխատանքէն կը հանեն:

Չարց – Վերապատուելի, խնդրում են իսլամ հայերի հետ հանդիպումների մի քանի դէպք պատմէք:

Պատ. – Արդուինի գյուղերէն մայրը եւ մօտ քսան տարեկան տղան եկեղեցի եկան, մայրը ըսաւ, որ տղայիս վրայ թուղթ գրեր են, կուզեն, որ աղօթես: Այսպէս կըլլայ, թուրքերը երբեմն հայկական եկեղեցի կուզան թուղթ ու գիրի, իրենց հիւանդներու վրան աղօթելու համար: Այդ ժամանակ հայաստանցի մի քոյր ներս մտաւ, կարճ խօսեցանք, գնաց, այդ տղան ըսաւ.

– Խո՛ջա, դուն մեր լեզուն ուրկէ՞ գիտես:

– Այս լեզուն քու լեզո՞ւդ է, – հարցուցի ես:

– Այո՛, մեր գիւղի լեզուն է:

– Ուրեմն դո՞ւն ալ հայ ես, – ըսի ես:

– Ո՛չ, – ըսաւ, – հայ չեմ, այս մեր ծերերու լեզուն է:

–Ձաւակս,–ըսի,–բոլոր գիւղերու մէջ թուրքերը թուրքերէն կը խօսին, ինչպէ՞ս է, որ ձեր գիւղի մէջ յատուկ լեզու կայ, ան ալ հայերէն:

Այդ ժամանակ տղան մայրիկին դարձաւ, հարցուց.

–Մայրի՛կ, մենք հա՞յ ենք:

Մայրը ըսաւ.

–Տղա՛ս, չիտեմ, բայց ադ մեր լեզուն է:

Թէլէվիզիոնի վրայ հաղորդումներ կըլլան կրօնական նիւթերու շուրջ, երբեմն կը մասնակցին: Մէկը եկաւ, ըսաւ, որ քեզի տեսայ թիվիի վրայ, արիւնս քաշեց, իմ նախնիները հայ են եղեր, քրիստոնեայ: Ըսի՝ պէտք է քրիստոնեայ դառնաս, ըսաւ՝ ինչպէ՞ս դառնամ, պետական աշխատող եմ: Պատմեց, որ Խարբերդին մօտիկ երկու հայկական գիւղ կայ, բոլորը հայ են, հայերէն չիտեն, աղքատ են, Կ.Պոլիս չեն կըրնար գալ եւ քրիստոնէութիւն ընդունիլ, իսկ հոն կը վախճան կրօնափոխուիլ:

Թուրքիան ինչո՞ւ այդպէս կը վախճայ եւ հայերու դէմ կռիւ կընէ, որովհետեւ գիտէ, որ կորսուած հայեր կան, կը վախճայ, որ այս մարդիկ կարթնան:

Օր մը Ամերիկայէն եկած պատուելի Պերճ ճամպագեանին Իստանբուլ օդակայան պիտի ճամփայ դնէի, թաքսիի մէջ կը խօսէինք, շարժավարը հարցուց.

–Դուք հա՞յ էք:

Ես ալ ըսի.

–Դուն որտեղէ՞ն գիտցար, որ մեր լեզուն հայերէն է:

Ըսաւ.

–Ես ալ հայերէն կը խօսիմ:

Ըսի.

–Ուրեմն դո՞ւն ալ հայ ես:

Ըսաւ.

–Ո՛չ, ես հայ չեմ, ես համշենցի եմ:

Ասանկ դէպքեր շատ եղած են, իմ ծանօթներս ալ շատ հանդիպած են իսլամ հայերու, մանաւանդ, համշենցի հայերու: Իստանբուլի մէջ համշենցի շատ կայ, մէկ մասը կուզեն իրենց պատմութիւնը գիտնալ, բայց չիտեն ուրկէ կարդալ:

*Ջրուցեց
Սերգեյ Վարդանյանը*

ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ Սարգիս Հարությունյան

Ս.թ. հոկտեմբերի 3-ին մեջտեղ եկան միանգամից երկու շատ կարելու տեղեկություններ, որոնք թեև առնչվում են տարբեր ոլորտների, սակայն, թերևս, պետք է դիտարկվեն թուրքական արտաքին քաղաքականության ընդհանուր տեղաշարժերի համատեքստում.

❖ այդ օրը թուրքական ազդեցիկ «Ձաման» թերթը գրեց, թե սեղանին է դրված Ռուսաստանի կողմից Թուրքիային հակաօդային պաշտպանության «С-400» համալիրների վաճառքի հարցը,

❖ նույն օրը հայտնի դարձավ, որ Անկարայում որոշում է կայացվել \$3.5 մլրդ-ի ներդրում կատարել իրանական խոշորագույն՝ «Հարավային Փարս» գազահանքում:

Վերոհիշյալ երկու տեղեկությունների բնույթն ինքնին բավարար հիմք է ենթադրելու, որ թուրքական արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցող կամ սպասվող փոփոխությունները դժվար թե լինեն մակերեսային ու կարճաժամկետ: Եվ այդ իմաստով, չնայած փոփոխություններն առաջին հերթին վերաբերում են Արեւմուտքի հետ Անկարայի հարաբերություններին, սակայն, իրականում, կարող են ունենալ ավելի լայն բովանդակություն:

Հարաբերությունները ԱՄՆ-ի հետ

Իրաքյան պատերազմի մեկնարկից չորս տարի անց, նպատակ ունենալով խոչընդոտել Մերձավոր Արեւելքում իրանական ազդեցության աճին եւ Թեհրանի դեմ ուղղված կոալիցիոն երկրների շղթա ստեղծել՝ Վաշինգտոնը տարածաշրջանում սկսեց ռազմաքաղաքական բնույթի նախաձեռնությունների մի ամբողջ շարք:

Ս.թ. հուլիսի վերջին պարզ դարձավ, որ առաջիկա 10 տարիներին ԱՄՆ-ը Իսրայելին ու Եգիպտոսին տրամադրելու է, համապատասխանաբար, \$30 մլրդ-ի ու \$13 մլրդ-ի ռազմատեխնիկական օգնություններ: Բացի այդ, Սաուդյան Արաբիայի եւ Պարսից ծոցի արաբական միապետությունների հետ Սիացյալ Նահանգները, նույն ժամանակա-

հատվածի կտրվածքով, կնքելու է \$20 մլրդ-ի ռազմատեխնիկական մատակարարումներ իրականացնելու պայմանագրեր:

Քաղաքական մասով շեշտը հիմնականում դրվում է երկու նախագծերի իրականացման վրա, որոնք նույնպես ուղղված են տարածաշրջանում Իրանի ազդեցության կրճատմանը.

❖ խնդիր է հետապնդվում սկզբունքային պայմանավորվածության հասնել իսրայելա-պաղեստինյան բանակցություններում, ինչը հնարավորություն կտա արդեն այս նոյեմբերին Վաշինգտոնում հարցի առնչությամբ կայանալիք միջազգային համաժողովում համաձայնության գալ պաղեստինյան պետության ստեղծման ու արաբական երկրների կողմից Իսրայելը ճանաչելու հարցերում,

❖ պակաս կարելոր չի համարվում Լիբանանում արեւմտամետ վարչակազմի ամրապնդումը, ինչն ԱՄՆ պատկերացմամբ կարող է միայն նպաստել Սիրիայում իրանական ազդեցության սահմանափակմանը:

Թուրքիայի մասով այս ամենի մեջ առանձնանում է այն կարելոր փաստը, որ այդ երկիրը դուրս մնաց թե՛ ներծավորարեւելյան երկրներին մատակարարվող ամերիկյան \$63 մլրդ-ոց ռազմական փաթեթից եւ թե՛ ԱՄՆ-ի կողմից ներգրավված չէ իսրայելա-պաղեստինյան ու լիբանանյան հարցերի շուրջ ընթացող գործընթացներում, ինչն, օրինակ, առկա է սաուդյան ու եգիպտական դիվանագիտությունների պարագայում:

Կարելոր մյուս ցուցիչը քրդական գործերում ի հայտ եկող նոր իրողություններն են: Հոկտեմբերի 2-ին Էրբիլում նստող Քուրդիստանի տարածաշրջանային կառավարությունը (ՔՏԿ) հայտարարեց, թե իր ենթակայության ներքո գտնվող շրջաններում¹ առկա նավթագազային պաշարների յուրացման նպատակով պայմանագրեր է կնքելու օտարերկրյա ընկերությունների հետ: Թեեւ Իրաքի նավթի նախարարությունը շտապեց հայտարարել, թե նման պայմանագրերն օրինական ուժ չեն ունենա², սակայն փաստն այն է, որ արդեն այսօր ոչ միայն հստակեցված են օտարերկրյա այն ընկերությունները, որոնց հետ պետք է կնքվեն պայմանագրերը (այլապես ՔՏԿ-ն հանդես չէր գա նման հայտարարությամբ), այլեւ Իրաքի քրդական վերնախավը բավական լուրջ քայլ է կատարել անկախություն տանող ճանապարհին: Հյուսիսիրաքյան նավթի եկամուտները կարող են դրական կերպով հարթություն տեղափոխել քրդական պետության ստեղծման ընթացքը:

ՔՏԿ նման քայլը վկայում է, որ Էրբիլում ունեն Վաշինգտոնի ոչ միայն հավանությունը, այլեւ՝ վերջինիս կողմից որոշ երաշխիքներ:

Պարզ է, որ ՔՏԿ-ի նման որոշման կայացումը, իրականում, Վաշինգտոնի կողմից Անկարայի նկատմամբ կիրառված նոր ճնշում է: Պետք է նաև այդ իմաստով դիտարկել ԱՄՆ Սենատի սեպտեմբերի 26-ի բանաձեւը՝ Իրաքը դաշնային երեք շրջանների (քրդական, սուննիական եւ շիական) բաժանելու վերաբերյալ:

Պատահական չէ, որ Անկարայում հարկ համարեցին հրապարակային մեղադրանքների դաշտ տեղափոխել Թուրքիայում գործող քրդական զինյալների կողմից ամերիկյան արտադրության զենքերի կիրառման փաստը, իսկ հոկտեմբերի 1-ին հայտնի դարձավ, որ հրաժարական է ներկայացրել Քրդական բանվորական կուսակցության զինյալների դեմ պայքարի համակարգման գծով Անկարայում ԱՄՆ հատուկ ներկայացուցիչ, պահեստի գեներալ Ջոզեֆ Ռալստոնը³: Սակայն ամենացուցում արձագանքը պետք է համարել հոկտեմբերի 7-ից կտրուկ սրված թուրք-քրդական հարաբերությունների⁴ հիման վրա՝ Էրդողանի կառավարության համապատասխան որոշումն ու թուրքական բանակային ուժերի ներխուժումը Ջյուսիսային Իրաք՝ չնայած ԱՄՆ ու ԵՄ ընդդիմությանը:

Ամերիկա-թուրքական շարունակվող հակասությունների դաշտում է ԱՄՆ Կոնգրեսի կողմից Ջայոց ցեղասպանության մասին 106-րդ բանաձեւի ընդունման հարցը: Հոկտեմբերի 10-ին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների տան Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը որպես ցեղասպանություն բնութագրեց 1915թ. անցքերը, իսկ ավելի վաղ Վաշինգտոնն անգամ հարկ էր համարել կազմակերպել լրատվական արտահոսք՝ ողջ Ներկայացուցիչների տան կողմից բանաձեւի ընդունման վերջնաժամկետի վերաբերյալ (ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի մեծամասնության ղեկավար Սթենի Ջոյերը հայտարարեց, թե 106-րդ բանաձեւը կընդունվի մինչեւ ԱՄՆ-ում նշվող «Երախտագիտության օրը»՝ նոյեմբերի 25-ը):

2007-ը, ըստ երեւութին, բեկումնային եղավ արեւմտյան տեղեկատվական քաղաքականության մեջ Ջայոց ցեղասպանության հարցի ներկայացման առումով: Եվ այդ իմաստով ամենեւին էլ պատահական չէր, որ ներկայումս քննարկվող 106-րդ բանաձեւը կոնգրեսական Ադամ Շիֆը ներկայացրեց ս.թ. հունվարի 19-ին Ստամբուլում տեղի ունեցած «Ակոս» թերթի գլխավոր խմբագիր Ջրանտ Դինքի սպանությունից հետո՝ հունվարի 30-ին: Այսինքն, եթե անգամ Սթենի Ջոյերը սխալվի, միեւնույն է, այսօր գործընթացը գնում է ԱՄՆ-ի կողմից Ջայոց ցեղասպանության փաստի ճանաչման ուղղությամբ: Իսկ Վաշինգտոնում ամեն կերպ ձգտում են դա ցույց տալ Անկարային:

Հարաբերություններն Իսրայելի հետ

Իսրայելա-թուրքական հարաբերությունները երբեք չեն վերաբերել սոսկ երկու երկրներին: Ռազմաքաղաքական դաշինքը Իսրայելի ու Թուրքիայի միջև հանդիսացել է Արեւմուտքի կողմից դիտարկվել է որպես մերձավորարեւելյան փոխդասավորվածության առանցքային տարրերից մեկը: Հետեւաբար, Թել Ավիվի ու Անկարայի հարաբերություններում հրապարակային հակասությունների ի հայտ գալն ու մի քանի տարի դրանց շարունակվելը չեն կարող լինել իրավիճակային եւ չառնչվել այդ երկրների առաջնային շահերին:

Հայտնի է, որ ս.թ. սեպտեմբերի 6-ին իսրայելական օդուժը հետախուզական չվերթ իրականացրեց Սիրիայի հյուսիսարեւելյան հատվածում՝ ամերիկյան աղբյուրների մատուցմամբ նաեւ ռմբահարելով սիրիական ռազմական օբյեկտներից մեկը:

Թեեւ միջադեպն ինքնին այդքանով ավարտվեց, սակայն ուշադրություն գրավեց դրան հետեւած զարգացումներում Անկարայի դիրքորոշումը:

Նախ, սեպտեմբերի 8-ին թուրքական կողմը հարկ համարեց գաղտնագերծել Սիրիային սահմանակից թուրքական Գազինթեփի ու Հաթայ նահանգներում իսրայելական օդուժի «F-15» ինքնաթիռների նետած վառելիքի լրացուցիչ բաքերի հայտնաբերման փաստը: Այնուհետեւ, Թուրքիայի արտգործնախարարությունը բացատրություն պահանջեց Անկարայում իսրայելական դեսպանից՝ հայտնաբերվածի կապակցությամբ:

Երկու օր անց՝ սեպտեմբերի 10-ին, Թուրքիան՝ արտգործնախարար Ալի Բաբաջանի մակարդակով հրապարակավ մեղադրեց Իսրայելին նշված գործողության ժամանակ թուրքական օդային տարածքը խախտելու մեջ: Իսկ հաջորդ երեք օրերին ի հայտ եկան լրատվական երկու ուշագրավ արտահոսքեր:

Սեպտեմբերի 11-ին քուվեյթյան «Ալ-Վաթան» պարբերականը գրեց, թե Անկարան քննարկում է Իսրայելի հետ ռազմական համատեղ զորավարժությունները չեղյալ հայտարարելու հարցը:

Սեպտեմբերի 13-ին նույն երկրում լույս տեսնող «Ալ-Ջարիդա» թերթի հրապարակման համաձայն՝ գործողության նախօրեին թուրքական բանակը ոչ միայն Իսրայելին ապահովել է հետախուզական անհրաժեշտ տեղեկությամբ, այլեւ թույլատրել է օգտագործել Թուրքիայի օդային տարածքը: Ընդ որում, «Ալ-Ջարիդայի» ներկայացմամբ, վարչապետ Էրդողանը հայտարարել է, որ թուրքական ռազմական

հետախուզությունը չի համակարգել իր գործողությունները կառավարության հետ, այսինքն՝ գործել է ինքնուրույնաբար:

Թեև հնարավոր է, որ քուվեյթյան պարբերականների մատուցած տեղեկությունները համապատասխանում են իրականությանն ու այդ առումով դրանք նախ եւ առաջ առնչվում են Էրդոհանի կառավարություն-թուրքական բանակ հակասություններին, սակայն փաստն այն է, որ նման կարելի է միջազգային հնչեղություն ստացած միջադեպի կապակցությամբ պաշտոնական Անկարան որոշում կայացրեց Իսրայելի հետ հարաբերությունները հրապարակային մեղադրանքների դաշտ տեղափոխել:

Այդ համատեքստում բավական ինտրիգային է ներկայանում դեպքի կապակցությամբ սեպտեմբերի 10-ին Անկարա Սիրիայի արտգործնախարարի այցելության փաստը: Քիչ հավանական է, որ Դամասկոսում որոշեին Վալիդ ալ-Մուալեմին ուղարկել Թուրքիա՝ Անկարայի նկատմամբ ճնշում բանեցնելու նպատակով: Սիրիան չունի այդ հնարավորությունը: Արտգործնախարարի մակարդակով տեղի ունեցած այցելությունը կարող է վկայել, թե անվտանգության գծով Անկարայի ու Դամասկոսի միջեւ առկա է որոշակի պայմանավորվածություն⁵, ինչը տրամաբանական է թվում՝

❖ 1999թ. Սիրիայում Աբդուլա Օջալանին ապաստանից զրկելուց հետո նկատվող թուրք-սիրիական ջերմացման ֆոնին,

❖ 2003թ. իրաքյան պատերազմի մեկնարկից հետո Մերձավոր Արևելքում առաջացած նոր իրավիճակի համատեքստում,

❖ Եւ, անշուշտ, իսրայելա-թուրքական հակասությունների առումով:

Իսրայելա-թուրքական հակասությունները ներկայացնող դրվագներից է նաեւ Հայոց ցեղասպանության նկատմամբ Թել Ավիվի ու հատկապես ԱՄՆ հրեական լոբբիի դիրքորոշման մեջ տեղի ունեցող փոփոխությունը:

Չնայած պաշտոնական Թել Ավիվը շարունակում է չճանաչել Հայոց ցեղասպանության փաստը, իսկ ԱՄՆ հրեական լոբբիի գերակշիռ մասը շարունակում է հայտարարել, թե Կոնգրեսում սատարում է Անկարային, սակայն ինչպես Վաշինգտոնի պարագայում, այստեղ նույնպես առկա է հոգուտ ճանաչման գործընթաց, ինչը հատկապես ակնհայտ դրսևորումներ ստացավ վերջին երկու տարիներին⁶:

Բայց եթե ԱՄՆ պարագայում նպատակ է հետապնդվում լուծել ամերիկյան քաղաքականության համար կարելի տարածաշրջանային

հարցեր (օրինակ, հայ-թուրքական սահմանի վերաբացման հարցը), ապա Իսրայելի դեպքում հարցի բարձրացումը կարող է ունենալ միայն մի նպատակ՝ ճնշում բանեցնել Անկարայի նկատմամբ:

Տեղաշարժ ԵՄ-ի հետ հարաբերություններում

Թուրքական քաղաքականությանն առնչվող զարգացումների հաջորդ կարելուր ցուցիչը Եվրամիության հետ Անկարայի հարաբերություններն են:

Չնայած ռազմաքաղաքական առումով Վաշինգտոնի հետ կապերն ունեցել են կարելուր բնույթ, սակայն Անկարայում հենց եվրոպական ուղղությունն է ավելի հիմնարար դիտարկվել՝ ելնելով արտաքին ռազմավարական ընտրության հարցից:

Ա.թ. օգոստոսի 27-ին հանդես գալով արտաքին քաղաքական իր առաջին ծրագրային ելույթով՝ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին Թուրքիայի առնչությամբ կատարեց բավական լուրջ հայտարարություն: Ելիսեյան պալատի ղեկավարը ոչ միայն ուղղակի դեմ դուրս եկավ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցում, այլև Անկարայի վերաբերյալ առաջարկեց փոխգործակցության նոր ձևաչափ՝ «Միջերկրածովյան միություն», որը պետք է ստեղծվի արդեն 2008թ.:

Միգուցե «Միջերկրածովյան միության» գաղափարը ներկայումս ավելի շատ հանդես է գալիս զուտ ֆրանսիական շահերի տեսանկյունից եւ քիչ ընդհանրություններ ունի ողջ ԵՄ քաղաքականության հետ, բայց հաշվի առնելով Սարկոզիի ընտրվելուց հետո հատկապես եվրոպական ուղղությամբ նկատվող ֆրանսիական քաղաքականության ակտիվացումը՝ պետք է հավանական համարել, որ նման՝ հայեցակարգային բնույթի նախագծի առաջընթացումը չի կարող սահմանափակվել միայն Ֆրանսիայի քաղաքականության ձևաչափով:

Թուրքիայի մասով սկզբունքային նորությունն, անշուշտ, այն չէ, որ պաշտոնական Փարիզը հրապարակայնորեն մերժեց ԵՄ-ին Անկարայի անդամակցության հավանականությունը, այլ այն, որ անելով այդ քայլը՝ Սարկոզին առաջարկեց ուրիշ լուծում: Նախկինում այլ ճանապարհի բացակայությունը Անկարային որոշակի հույսեր էր թողնում երբեւէ ԵՄ-ին անդամակցելու առումով: Պաշտոնական Փարիզի «Միջերկրածովյան միությունը» նշանակում է, որ Անկարայում պետք է մոռանան այդ հույսերի մասին:

Յետեւութիւններ

Արեւմուտքի հետ Թուրքիայի վերջին տարիներին ի հայտ եկած հակասութիւններն այլեւս չեն կրում իրավիճակային բնույթ եւ իրենց ազդեցութիւնն են թողնում թուրքական քաղաքականութեան վրա:

Այդ իմաստով թուրքական արտաքին քաղաքականութեան նոր նախաձեռնութիւնները (հարաբերութիւնների ջերմացումը արաբական ու ընդհանրապէս իսլամական աշխարհի, ինչպէս նաեւ Ռուսաստանի հետ) օրինաչափ են եւ դժվար թէ ունենան կարճաժամկետ բնույթ, քանի որ առնչվում են թուրքական քաղաքականութեան հիմնական ուղղութիւններին եւ պարունակում են համակարգային փոփոխութեան տարրեր:

Թուրքական քաղաքականութեան մեջ տեղի ունեցող փոփոխութիւնների հիմնարար բնույթի օգտին են խոսում նաեւ Թուրքիայի ներքին կյանքում նկատվող շարժերը:

Չի կարող ուշադրութիւն չգրավել այն հանգամանքը, որ այս տարի հուլիսին եւ օգոստոսին Թուրքիայում տեղի ունեցած խորհրդարանական ու նախագահական ընտրութիւններում թուրք իսլամիստների տպավորիչ եւ աննախադեպ հաղթանակը հաջորդեց բանակի ու թուրքական քաղաքական դաշտի աշխարհիկ ուժերի միջեւ դեռեւս զարնանից ծավալված բավական լուրջ պայքարին:

Ուշագրավը, սակայն, ոչ թէ նման պայքարի առկայութիւնն էր եւ ոչ էլ անգամ իսլամիստների հաղթանակը, այլ Երդողանի կառավարութեան որոշումը՝ նախաձեռնութիւնը վերցնել սեփական ձեռքը՝ նշանակելով արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ: Չարցն այն է, որ հաշվի առնելով հանրապետական Թուրքիայի քաղաքական պատմութիւնը (զինվորականների կազմակերպած պետական երեք հեղաշրջումներ՝ 1960թ., 1971թ., 1980թ., եւ 1997թ. նրանց իսկ ուղղակի ճնշման ներքո իսլամիստ Էրբաքանի կառավարութեան անկումը), քիչ հավանական է, որ Երդողանի կառավարութիւնն ու ԱԶԿ-ն պարզապէս որոշած լինեն դիմել ռիսկի: Յետեւաբար, թուրքական քաղաքականութեան մեջ իսլամիստական ազդեցութեան աճը պետք է դիտարկել նաեւ Թուրքիայի համար առանցքային բոլոր ուղղութիւններով (ԱՄՆ, ԵՄ, Իսրայել) ի հայտ եկած խնդիրների համատեքստում:

¹ ՔՏԿ իշխանության ներքո են գտնվում հյուսիսիրաքյան քրդական երեք նահանգները՝ Դոհուքը, Էրբիլը եւ Սուլեյմանիան: ՔՏԿ-ն փաստացի իշխանություն ունի նաեւ Իրաքի Նինավա, Քիրքուկ ու Դիյալա նահանգների որոշ հատվածների նկատմամբ: Մոտավոր հաշվարկների համաձայն՝ ներկայումս ՔՏԿ իշխանության ներքո գտնվող տարածքը կազմում է գրեթե 63 հազ. կմ²: Ըստ արեւմտյան աղբյուրների, այսօր Իրաքում բնակվում են շուրջ 4.5 մլն քրդեր, որոնց ավելի քան 95%-ը կենտրոնացած է հենց վերոնշյալ նահանգներում:

² Մինչ օրս Բաղդադի կենտրոնական կառավարությունը չի կարողանում լուծել երկրի նավթագազային պաշարների շահագործման ու դրանից ստացվող եկամտի բաշխման հարցը: Իրաքի հյուսիսում բնակվող քրդերն ու հարավում գտնվող շիաները չեն ցանկանում իրենց շրջաններում առկա էներգակիրներից ստացվող եկամուտները կիսել ո՛չ կենտրոնական կառավարության եւ ո՛չ էլ նման պաշարներ չունեցող Իրաքի կենտրոնական հատվածում բնակվող սուննիների հետ:

³ Ուշագրավ է, որ որպես հրաժարականի պատճառաբանություն ներկայացվեց հարցի առնչությամբ թուրք-ամերիկյան համատեղ աշխատանքում առաջընթացի բացակայությունը:

⁴ Այդ օրը քուրդ զինյալների հարձակման արդյունքում զոհվեցին 13 թուրք զինվորներ: Դեպքը առիթ հանդիսացավ Անկարայի համար՝ ներխուժելու իրաքյան Քուրդիստան:

⁵ Այդ իմաստով բավական տպավորիչ օրինակ էր սույն հոկտեմբերի 7-ին Դամասկոսում Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանի հայտարարությունը, թե Անկարան թույլ չի տա Իսրայելին օգտագործել թուրքական օդային տարածքը Սիրիայի նկատմամբ հարձակումներ գործելու նպատակով:

⁶ Ուշագրավ վերջին օրինակը սույն օգոստոսի 24-ին ԱՄՆ հրեական ազդեցիկ կազմակերպություններից մեկի՝ «Հակաանվանարկման լիգայի» (ADL) կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչումն էր:

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՃԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ **ԱՆՈՒՀ Հովհաննիսյան**

2002թ. Թուրքիայում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում իշխանության եկավ Արդարություն եւ զարգացում կուսակցությունը (ԱԶԿ): Կուսակցության առաջնորդ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարեց, որ ինքը երաշխավորում է Թուրքիայի աշխարհիկ զարգացումը: Դրա ապացույցը կարող է հանդիսանալ Թուրքիայի՝ Եվրախնտեզրմանն ուղղված շարունակական գործընթացը: Սակայն մի շարք մասնագետներ համեմատում են ԱԶԿ-ն իսլամիստական Տրոյական ձիու հետ եւ կարծում են, թե այն լուրջ սպառնալիք է թուրքական աշխարհիկությանը: Նման մտահոգություններն անհիմն չեն, քանի որ ԱԶԿ կառավարման տարիներին ակտիվացավ «կանաչ փողի» ներթափանցումը Թուրքիա: Սույն հոդվածում մենք կփորձենք ներկայացնել Թուրքիայում իսլամական կապիտալի աճող ազդեցության հետ կապված որոշ խնդիրներ:

Արդարություն եւ զարգացում կուսակցությունը հաղթանակ տարավ այն ժամանակ, երբ Թուրքիայում առկա էր խոր կառուցվածքային ճգնաժամ, երբ թուրքական քաղաքական համակարգը չէր ապահովում տնտեսության հետագա աճը: Բանկային համակարգը հոգեվարքի մեջ էր, հատկապես այն պահից հետո, երբ 2001թ. փետրվարին թուրքական լիրան կորցրեց իր արժեքի 1/3-ը: ԱԶԿ իշխանությունից առաջ 5 տարվա ընթացքում թուրքական տարադրամի արժեզրկումը հասել էր 200.000-ից մինչեւ 1.7 միլիոն լիրա՝ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց: Իշխանության առաջին երկու տարվա ընթացքում ԱԶԿ-ն կարողացավ բարձրացնել սեփական տարադրամի արժեքը մինչեւ 1.5 միլիոն լիրա՝ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց: Այսպիսով, լիրայի հետագա անկումը կանգնեցվեց, կառավարությունն էլ խոստացավ փական դնել վեց զրոյանոց ցուցանիշի վրա: Չնայած տնտեսագետների այն կարծիքին, որ այդ ամենն ավելի շատ կոսմետիկ բնույթ էր կրում, դրանք հոգեբանական մեծ ազդեցություն ունեցան Թուրքիայի նման մի երկրում, որտեղ գերարժեզրկումը (հիպերինֆլացիան) գրեթե նորմ էր դարձել:

Էրդողանի վարչակազմը՝ սեփական վարկանիշը բարձրացնելու նպատակով, ձեռնամուխ եղավ ոչ շատ ծախսատար, բայց մեծ ժողովրդականություն բերող բարեփոխումների: Դրանցից մեկը՝

աշակերտներին անվճար դասագրքեր տրամադրելն էր: Մեկ այլ քայլ էր ծխախոտահարկի իջեցումը: Թուրքիայի պես երկրում, որտեղ մեծահասակ բնակչության կեսից ավելին ծխում է, նման միջոցները գրեթե յուրաքանչյուր ընտանիքի գրպանի վրա են ազդում:

Դրամական կայունացումը, անվճար դասագրքերը, անկասկած, բարձրացրին ԱԶԿ առանց այդ էլ բարձր վարկանիշը: Սակայն անհայտ էին այն ֆինանսական աղբյուրները, որոնք թույլ տվեցին Էրդողանի կառավարությանը կայունացնել թուրքական լիրան եւ ֆինանսավորել ժողովրդականություն վայելող տարաբնույթ ծրագրեր: Դա առավել եւս անհասկանալի էր, քանի որ համաձայն հենց Թուրքիայի ֆինանսների նախարարության տվյալների՝ երկրի հարկատուների 74%-ը թաքցնում է իր իրական եկամուտները, իսկ իրաքյան պատերազմը զգալիորեն հարվածել էր զբոսաշրջությունից երկրի գանձարան հոսող գումարների ծավալին: Այսպիսով, կոշտ հարկային քաղաքականության բացակայության եւ երկրի եկամտաբեր ճյուղերից մեկի ոչ լիարժեք գործունեության պայմաններում Էրդողանի կառավարության հաջողությունները կասկածի տեղիք տվեցին թե՛ միջազգային ֆինանսական կառույցներին, թե՛ թուրք տնտեսագետներին: Հատկապես վերջիններս ԱԶԿ տնտեսական հաջողությունների հիմքում սկսեցին տեսնել հարուստ իսլամիստական գործարարներից եւ որոշ մերձավորարեւելյան երկրներից ստացվող գումարները:

Հատկանշական են Կոնիա եւ Կայսերի քաղաքների օրինակները (վերջինս Աբդուլահ Գյուլի հայրենի քաղաքն է), որոնք իսլամական կապիտալի շնորհիվ գավառական քաղաքներից վերածվել են խոշոր տնտեսական կենտրոնների: Ամերիկացի վերլուծաբան Մայքլ Ռուբինը, մասնավորապես, անդրադառնում է իսլամական «Քոմբասան Հոլդինգի» գործունեությանը: Հոլդինգը հիմնադրվել է Հաշիմ Բայրամի կողմից, որը եղել է Կոնիայում կրոնական դպրոցի ուսուցիչ: «Քոմբասան»-ը արագ աճ է արձանագրել 1990-ականներից, երբ Գերմանիա արտագնա աշխատանքների մեկնած թուրք բանվորների փոխանցումների դիմաց սկսեց արժեթղթեր թողարկել, որոնք եւ ներդրվում էին տեղական բիզնեսի տարբեր ոլորտներում: Մեկնարկելով որպես տպագրական եւ թղթ տարաների փոքրիկ գործարան՝ հոլդինգը ներկայումս ընդգրկում է ավելի քան 50 ֆիրմաներ՝ ավտոմոբիլային, էլեկտրոնային, շինարարական, տեքստիլային, նավթամթերային եւ առետրային բնագավառներում: «Քոմբասանի» հզոր ֆինանսական ներուժը թափանցել է քաղաքականության մեջ. նա էր ֆինանսավորում Էրբաքանի նախընտրական արշավը Անատոլիայում 1996թ., իսկ ներկայումս օժանդակում է Էրբաքանի «Բարօրություն» կուսակցությունից սերած Էրդողանի եւ

Գյուլի ԱԶԿ-ին: Ի դեպ, «Քոնքասանը» մի քանի անգամ իրեն անվճարունակ է հայտարարել, պարտատոմսեր թողարկել, այնուհետև նորից գործել՝ վարկավորվելով տարբեր կասկածելի աղբյուրներից: Ըստ որոշ գնահատականների, պետության հովանավորությունը վայելող այդ ընկերությունը զբաղվում է փողերի լվացմամբ՝ հոգուտ իսլամական խոշոր ֆինանսական խմբավորումների:

Նախքան խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ հաղթանակը, Աբդուլահ Գյուլը քննադատում էր այն ժամանակվա կառավարության մտադրությունը՝ պատենշ ստեղծել իսլամական կապիտալը ներկայացնող ձեռնարկությունների գործունեության դեմ՝ համարելով օրենքի այդ նախագիծը «վրեժխնդրական»: Անշուշտ, նա անկողմնակալ չէր այդ հարցում. 1983–1991թթ. ժամանակահատվածում Գյուլը աշխատել էր Սաուդյան Արաբիայի Իսլամական զարգացման բանկի Ջեդայի մասնաճյուղում: Իսլամական բանկերը (հատկապես Սաուդյան Արաբիայի) պարբերաբար գումարներ են փոխանցում Թուրքիայում գործող ձեռնարկություններին: Ընդդիմադիր Հանրապետական-ժողովրդական կուսակցության առաջնորդ Դենիզ Բայքալը բազմիցս մեղադրել է ԱԶԿ-ին «կրոնական տնտեսություն» ստեղծելու համար:

Վարչապետ Էրդողանը լռության է մատնում նման մեղադրանքները, քանի որ ինքն անձամբ նույնպես լայնորեն ներգրավված է «կանաչ բիզնեսի» մեջ: Ռահմի Քոչը՝ Թուրքիայի հնագույն եւ խոշորագույն «Քոչ Հոլդինգի» նախագահը, CNN-ին տված հարցազրույցում նշել էր, որ Էրդողանի ունեցվածքը գերազանցում է 1 մլրդ ԱՄՆ դոլարը եւ որ դրա առաջացումն անհայտ է: «Հյուրիյեթ» թերթը նշել էր նաեւ, որ Էրդողանը խոշոր փայաբաժիններ ունի առնվազն 3 հզոր ֆիրմաներում, որոնք ֆինանսավորում են իսլամական քաղաքական ուժերին: Էրդողան ընտանիքը վերահսկում է «Էմնիյեթ Ֆուդզ» ընկերության 50%-ը. նշված ընկերությունը ֆինանսավորում է «Ուլքեր» հացամթերքի եւ հրուշակեղենի հսկա ցանցը: Վարչապետը նաեւ փայատեր է «Իհսան Ֆուդզ» եւ «Յեմիդողան Ֆուդզ» ընկերություններում, վերջիններիս արտադրած «Ուլքեր Կոլա-Թուրքա»-ն աստիճանաբար դուրս է մղում հանրահայտ «Կոկա-կոլա» ընկերությանը, մանավանդ որ «Կոլա-Թուրքա» զովացուցիչ ընկերությանը «գովազդվում» է վարչապետի հեղինակությամբ:

Վարչապետի տնտեսական գործունեությունը չի հակասում Թուրքիայի օրենքներին, սակայն թուրք հասարակությանը մտահոգում է այդ ֆինանսական միջոցների ոչ թափանցիկ ներխուժումը քաղաքական ոլորտ: Իսլամական բիզնեսի չափաբաժնի աճը Թուրքիայի տնտեսական համակարգում ակնհայտ է եւ աներկբայորեն կապվում է ԱԶԿ ազդեցության ուժեղացման հետ: Օրինակ, «Քոնքասան»-ի «Աֆրա»

սուպերմարքեթների ցանցի գործունեությունից ստացված եկամուտները ներդրվում են այլ իսլամիստական ձեռնարկությունների ստեղծման, ինչպես նաև բազմաթիվ քաղաքական արշավների մեջ: Մենեջմենթի զաղտնիությունը եւ ոչ թափանցիկությունը թույլ են տալիս անվերահսկելի եկամուտներն օգտագործել իսլամիստական կուսակցությունների եւ կազմակերպությունների ֆինանսավորման, թուրքական պետական ինստիտուտներ ներթափանցելու եւ իսլամական ազդեցության ընդլայնման համար:

Մասնագետների կարծիքով՝ «կանաչ փողի» ներհոսքը Թուրքիա կազմում է 10-12 մլրդ ԱՄՆ դոլար տարեկան եւ երկիր է մտնում առավելապես կանխիկ տեսքով, այսպես ասած, «դրամապանակներով»: Այդ գումարները ներդրվում են ոչ միայն տնտեսության, այլ նաև քաղաքականության մեջ: Միլիարդների հասնող չհաշվարկված գումարների ներհոսքը Թուրքիա, ԱԶԿ իշխանության գալուց ի վեր, ըստ վերլուծաբանների, կարող է գալ միայն Սաուդյան Արաբիայի պես հարուստ արաբական երկրներից, որտեղ երկար տարիներ աշխատել է Գյուլը: Այդ վարկածը հաստատվում է նաև ժամանակագրական տվյալներով, քանի որ 2001թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո իսլամական ներդրողներն իրենց ամերիկյան հաշիվներից 100-200 մլրդ դոլարի չափերի հասնող գումարները տեղափոխեցին այլ երկրներ, մասնավորապես՝ Ֆրանսիա, Լիբանան, Շվեյցարիա եւ Թուրքիա:

ԱԶԿ երկու ֆինանսական խորհրդականները՝ Ջունեյթ Ջափսուն եւ Քորքուք Օզալը (Թուրգուք Օզալի եղբայրը) նույնպես կապված են իսլամական կապիտալի հետ: Քորքուք Օզալը փայտեր է «Ալ-Բարակա ֆինանս» եւ «Ֆայսալ ֆինանս» խոշորագույն թուրքական բանկերում: Իսկ Ջափսուն գործընկերակցում էր Յասին Ալ-Քաադիմ, որի հաշիվները ամերիկյան բանկերում սառեցվել էին Ալ-Քաիդայի հետ կապերի պատճառով: Իսկ էրդողանի խորհրդական Ջունեյթ Ջափսուն, որը հիմնադիրն է «Բիմ» խանութների ցանցի, ԱԶԿ իշխանության տարիներին ընդլայնեց այդ ցանցը՝ 21 բաժանմունքներից հասցնելով շուրջ 1000-ի: Վերջինս համարվում է իսլամական «Անադոլու ֆինանս Յաուզ» բանկի հիմնադիրներից մեկը:

Թուրքիայի իսլամական կապիտալի հետ է կապված մեկ այլ էական խնդիր եւս: Դա իսլամիզմի արտահանումն է Եվրասիայի երկրներ, մասնավորապես Ռուսաստանի թուրք-իսլամական շրջաններ եւ Միջին Ասիա: Հսկայական ֆինանսական միջոցների շնորհիվ իսլամական «Գյուլեն» հիմնադրամը, օրինակ, բազմաթիվ համալսարաններ, մասնավոր դպրոցներ, բարեգործական կազմակերպություններ է տարածել Յակուտիայում, Չուվաշիայում, Թաթարստանում, Ադրբեջանում, Ալբա-

միայն, Ղրիմում եւ այլուր: Թուրքիայում հրատարակվող «Ջաման» թերթը լույս էր տեսնում նշված երկրների լեզուներով՝ հարմարվելով տեղի առանձնահատկություններին եւ խնդիրներին: Թուրքագետ Ն.Կիրեեւի կարծիքով՝ այդ գործունեության հեռահար նպատակն էր թուրքալեզու տարրերի միավորումը ժամանակակից, «մեղմ» իսլամի գաղափարների ներքո՝ նրանց համակրանքն ապագա իսլամական Թուրքիայի հանդեպ ապահովելու համար: Ն.Կիրեեւի գնահատմամբ՝ որոշ թուրք իսլամականներ դիտում են Թուրքիան որպես սպասվելիք նոր իսլամական ռեֆորմացիայի առաջնորդ, որն այլընտրանք կդառնա իրանական մոդելին: Նրանց ռազմավարական խնդիրն է՝ ցանկացած ճանապարհով, առավելապես խաղաղ եւ աստիճանաբար, փոխել Թուրքիայի քաղաքական համակարգը, այնուհետեւ տարածել այդ մոդելը Եվրասիայի մուսուլմանական պետությունների եւ շրջանների վրա: Այդ գերխնդրի իրականացնողի դերում պետք է հանդես գա ժամանակակից տիպի իսլամիստական կուսակցությունը:

**ԱԴՐԲԵՋԱՆ – ԹՈՒՐՔԻԱ. ԷՆԵՐԳԵՏԻԿ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ
Սեւակ Սարուխանյան**

Ս.թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի պետական նավթային ընկերության (ԱՊՆԸ) նախագահ Ռ.Աբդուլահեւը հայտարարեց, որ Ադրբեջանը նպատակ ունի Թուրքիայում, Ջեյհան նավահանգստին հարող տարածքում կառուցել խոշոր նավթավերամշակման գործարան: Ընկերությունը պատրաստվում է գնել 1000 հա տարածք եւ ներկայումս քննարկում է նախագծի՝ շրջակա միջավայրի վրա թողնելիք ազդեցության հարցերը: Նախագծի իրականացումը կարող է նոր լիցք հաղորդել Ադրբեջան – Թուրքիա էներգետիկ համագործակցությանը եւ, անկասկած, կարելիոր ազդեցություն է ունենալու տարածաշրջանային զարգացումների վրա:

Ըստ նախնական տվյալների՝ նավթավերամշակման գործարանի տարեկան հզորությունը կկազմի 10-15 մլն տոննա նավթ, կառուցման աշխատանքները կարժենան մոտավորապես \$4,5-5 մլրդ: Աշխատանքների ֆինանսավորումն իրականացնելու է ԱՊՆԸ-ն՝ միջազգային ֆինանսական ինստիտուտների աջակցությամբ: Այս մասին՝ ստորեւ, իսկ այժմ անդրադառնանք նախագծի նախապատմությանը, որը մի շարք կարելիոր հարցեր է բարձրացնում, այդ թվում եւ Մերձավոր Արեւելքում տեղ գտած ռազմաքաղաքական արդի զարգացումների վերաբերյալ:

Ջեյհանում նավթավերամշակման գործարանի կառուցման նախագիծը երկար ժամանակ է՝ քննարկվում է Թուրքիայում, ինչը պայմանավորված է Ջեյհան նավահանգիստը կարելիոր էներգետիկ հանգույցի վերածելու գործընթացով: Սակայն գործարանի կառուցման առաջին եւ բավական լուրջ հայտը ներկայացրել է Հնդկական նավթային ընկերությունը (ՀՆԸ) 2002թ., երբ սկսվել էր Թուրքիայի էներգետիկ ոլորտի ազատականացման ակտիվ գործընթացը (պայմանավորված ԵՄ եւ Համաշխարհային բանկի պահանջ-առաջարկություններով): 2006թ. սեպտեմբերին ՀՆԸ-ն թուրքական *Calik Energy* ընկերության հետ Թուրքիայի կառավարությանն է ներկայացնում Ջեյհանում նավթավերամշակման գործարանի կառուցման հանգամանալի ծրագիր: Այն իր արժողությամբ եւ հզորությամբ ոչ մի բանով չի տարբերվում այն

նախագծից, որն Ադրբեջանն է պատրաստվում իրականացնել Թուրքիայի տարածքում: Նշենք, որ նախագիծը դեռևս քննարկվում է թուրքական գործադիր եւ վերահսկիչ մարմիններում:

Միեւնույն ժամանակ, հնդկական ընկերությունները 2006թ. Բաքվի հետ սկսեցին ակտիվ բանակցություններ վարել Ադրբեջանի տարածքում նավթի արտահանմանը մասնակցելու շուրջ: Առավել ակտիվ մասնակցություն ցուցաբերեց *ONGC Mittal Energy* ընկերությունը, որը սերտորեն կապված է ոչ այնքան հնդկական, որքան բրիտանական կառավարության հետ (*ONGC Mittal Energy* ընկերության բաժնետոմսերի մեծ մասը պատկանում է *Mittal Investment* խմբին, որը Յու.Տիմոշչենկոյի աջակցությամբ գնեց ուկրաինական «Կրիվոռոժստալ» գործարանը): *ONGC Mittal Energy-ն* հենց բրիտանական *Caspian Energy Group* ընկերությունից այս տարվա հուլիսին գնեց ադրբեջանական «Քյուրովդագ» նավթահորի բաժնետոմսերի 51%-ը:

Նշենք, որ թե՛ ամերիկյան, թե՛ բրիտանական վերլուծաբանները եւ քաղաքական գործիչները դրականորեն են արձագանքել հնդկական ընկերությունների ակտիվացմանը Կասպիցում եւ Թուրքիայում: Իսկ ԱՄՆ էներգետիկայի նախարարությունը Ջեյհանում հնդկական կապիտալով նավթավերամշակման գործարանի կառուցումը մինչեւ վերջերս համարել է ռազմավարական առումով շահավետ նախագիծ: Վաշինգտոնի նման կողմնորոշման համար առանցքային կարելի է համարել այն, որ Զնդկաստանի էներգետիկ ոլորտում աշխատող ընկերությունները եւ այդ երկրի սպառողական շուկան համարվում են Չինաստանի բնական մրցակիցները եւ այս տեսանկյունից բավական լուրջ լոբբիստական աջակցություն են ստանում ամերիկյան կառավարության եւ նավթային ընկերությունների կողմից:

Այս ամենը հաշվի առնելով՝ Թուրքիայի Ջեյհան նավահանգստի շրջանում սեփական ուժերով նավթավերամշակման գործարան կառուցելու ԱՊՆԸ որոշումը, նախագծից հնդկական կողմի ինքնամեկուսացում հիշեցնող հեռացումը, Թուրքիայի կառավարության կողմից ադրբեջանական նախագծի հաստատումը (Թուրքիայի «էներգետիկ վերահսկողությունը» նախագծին հավանություն տվեց հոկտեմբերի 6-ին, ԱՊՆԸ կողմից նախագծի վերջնական տեխնիկական առաջարկության ներկայացումից ընդամենը մեկ շաբաթ անց) բավական անսպասելի կարելի է համարել: Եթե ԱՊՆԸ նախագիծը, որը հնդկական նախագծի ճիշտ կրկնօրինակն է, քննարկենք Բաքվի շահերի տեսանկյունից, ապա դրա իրականացումը հետապնդում է մի քանի կարեւոր նպատակ.

1. սկսել ագրեսիվ ներդրումային քաղաքականություն տարածա-

շրջանի էներգետիկ նախագծերում: Սա Ադրբեջանի համար կարելու է իր էներգետիկ նշանակության պահպանման համար, մանավանդ որ Արեւելյան Եվրոպան եւ Սեւ ծովի ավազանը արդեն իսկ դարձել են ռուսական եւ դազախական բավական ագրեսիվ էներգետիկ ներդրումների գոտիներ,

2. դառնալ ակտիվ խաղացող Թուրքիայի աճող բենզինի շուկայում, եթե չհաջողվի հասնել ադրբեջանական նավթի անհրաժեշտ «միջազգայնացման»՝ դրանից բխող համապատասխան հետեւանքներով:

Սակայն շատ կարելու է այն, թե ինչու հնդկական կողմը «ինքնամեկուսացվեց» նախագծից: Այս հարցի հիմնական պատասխանը, մեր կարծիքով, պետք է փնտրել Մերձավոր Արեւելքում՝ ընդհանրապես եւ Իրաքում՝ մասնավորապես տեղ գտած զարգացումներում: Ջեյհանը հնդկական եւ մյուս միջազգային ընկերությունների համար կարելու ներդրումային հետաքրքրություն է ներկայացնում ոչ թե թուրքական այդ նավահանգստի՝ Կասպիցի նավթի արտահանման գործում ունեցած հնարավորությունների տեսակետից, այլ որ Ջեյհանն ի սկզբանե նավթային հանգույցի է վերածվել հենց իրաքյան նավթի արտահանման իր հնարավորությունների եւ հեռանկարների պատճառով: Կասպյան նավթն ընդամենը հավելյալ գործոն էր, որը սկսեց դեր խաղալ նավահանգստի զարգացման գործում: Հենց իրաքյան նավթի հեռանկարային վերամշակման համար էր նախատեսված Ջեյհանում նավթավերամշակման գործարանի կառուցման նախագիծը, որն առաջինը ներկայացրել էր հնդկական կողմը: Այս տեսանկյունից ՀՆԸ հեռացումը Թուրքիայից կարող է բացատրվել Իրաքի մասնատման գործընթացի ակտիվացմամբ, որը նոր թափ ստացավ Իրաքը դաշնային պետության վերածելու մասին ԱՄՆ օրենսդիրների ընդունած բանաձեւից հետո: Իրաքում քրդական պետության ստեղծումը, որի տարածքով թուրքական նավթատարի անցկացումը կամ այդ նավթատարի անվտանգության ապահովումն այսօր եւ մոտակա տարիներին շատ ավելի դժվար կարելի է պատկերացնել, քան թուրք-քրդական լայնամասշտաբ ռազմական առճակատումը, արդեն իսկ իր ազդեցությունն է թողնում Ջեյհանի հետագա զարգացման վրա՝ այս նավահանգիստը դարձնելով հիմնականում Կասպյան՝ դեռեւս ոչ մեծաքանակ նավթի արտահանման հանգույց: Հենց այս փաստն է, մեր կարծիքով, կարելու դեր խաղացել նախագծից հնդկական ընկերության հրաժարման համար, եւ նույն այս խնդիրն էլ Ադրբեջանին ուղղում է դեպի վերոնշյալ նախագծի իրականացումը, եթե հաշվի առնենք, որ Ջեյհանը շուտով դառնալու է հիմնականում Կասպյան նավթի արտահանման եւ վերամշակման հանգույց:

Նշենք նաև, որ ռուսական «Լուկոյլի» հրաժարումը Սամսուն–Ջեյհան նավթատարի կառուցման ծրագրից, որը սեւծովյան Սամսուն նավահանգստից Ջեյհան պետք է հասցնեն ռուսական եւ ղազախական նավթը, էլ ավելի կսահմանափակի թուրքական միջերկրածովյան նավահանգստի զարգացումը:

Ինչպես վերը նշել էինք, ԱՊՆԸ-ն Ջեյհանում նավթավերամշակման գործարան կառուցելու համար նպատակ ունի ստանալ միջազգային ֆինանսական կառույցների աջակցությունը, քանի որ ընկերությունն ինքը բավականաչափ ազատ միջոցներ չունի նախագծի իրականացման համար:

Նման երեւոյթն ինքնըստինքյան ոչնչով տարօրինակ չէ, եթե հաշվի առնենք այն հսկայական վարկային բեռը, որն ԱՊՆԸ-ն վերջին տարիներին վերցնում է իր վրա:

Սիայն 2006–2007թթ. ԱՊՆԸ-ն արեւմտյան բանկերից իր նախագծերի իրականացման համար ստացել է \$1 մլրդ 760 մլն վարկ՝ չհաշված Ադրբեջանի միջազգային բանկից ստացած \$200 մլն եւ Վրաստանի սեւծովյան ափին Կուլեւի նավթային տերմինալի կառուցման համար *Societe Generale-ից* ու *ABN Amro-ից* ստացած \$335 մլն վարկերը: Այս պայմաններում Ջեյհանում կառուցվելիք նավթավերամշակման գործարանի ստեղծման համար անհրաժեշտ \$4,5-5 մլրդ նոր վարկի ստացումը բավական ծանր իրադրոյթյան մեջ կդնի ԱՊՆԸ-ին, եթե, իհարկե, բացառենք այն հնարավորությունը, որ միջազգային վարկերի միջոցով նախագծերի իրագործումն Ադրբեջանի համար ֆինանսական եւ տնտեսական միջոցների ստվերային վերաբաշխման միջոց չի հանդիսանում: Այս հնարավորության մասին է խոսում գոնե այն, որ Կուլեւիի տերմինալի կառուցման համար \$335 մլն վարկ ստանալուց եւ ծախսեր կատարելուց հետո, ըստ ԱՊՆԸ փոխնախագահ Ս.Գասիմովի, ԱՊՆԸ-ն նպատակ ունի մասնավորեցնել այն՝ միջազգային կառույցներին իր վարկային պարտավորությունները մարելու եւ նոր ծրագրեր իրականացնելու նպատակով:

Ի՞նչ մեխանիզմներով է կատարվելու տերմինալի մասնավորեցումը եւ ո՞ւմ վերահսկողութանն են անցնելու ներկայումս ադրբեջանական պետությանը պատկանող բարձր շահութաբեր հզորությունները. սրանք կարելուր հարցեր են, մանավանդ որ Ադրբեջանի քաղաքական եւ տնտեսական ընտրանում պատկանող եւ Մերձավոր Արեւելքում գրանցված մի շարք ընկերություններ վերջին տարիներին ակտիվորեն գնում են ԱՊՆԸ-ի էներգետիկ նախագծերի բաժնետոմսերը: Ինչեւէ, Ջեյհանի նախագծի ինքնուրույն իրականացումը վեր է ԱՊՆԸ ուժերից: Այս

պարագայում կարելոր նշանակություն կունենա, թե որ բանկերը կմասնակցեն նախագծի ֆինանսավորմանը, ինչը կարող է լուրջ ցուցիչ հանդիսանալ Թուրքիա–Արեւմուտք հարաբերությունների ներկայիս մակարդակի եւ հեռանկարների զարգացման համար:

* * *

Չնայած ներկա տարածաշրջանային զարգացումները, Ադրբեջանի նավթային հատվածում տեղ գտած ոչ ստվերային գործընթացները խոսում են Բաքվի եւ Անկարայի ոչ այնքան շահավետ դիրքերի մասին, կարելոր է ընդունել, որ ԱՊՆԸ ջեյհանյան նախագիծը լուրջ հայտ է Ադրբեջանի՝ տարածաշրջանային ակտիվ դերակատարի վերածման համար: Նախագծի ֆինանսավորման իրականացման մեջ արեւմտյան բանկերի ընդգրկումն էլ ավելի կամրապնդի Բաքվի կապերը միջազգային ֆինանսական կառույցների հետ, ինչն, իր հերթին, կարելոր քաղաքական նշանակություն ունի: Վերոնշյալը Հայաստանի Հանրապետության համար խիստ կարելորում է սեփական տարածաշրջանային էներգետիկ նախագծերի իրականացման հարցը: Սա առաջին հերթին վերաբերում է ՀՀ հարավում նավթավերամշակման գործարանի կառուցմանը: Միեւնույն ժամանակ, մեծ նշանակություն ունի Ադրբեջանի էներգետիկ քաղաքականության ավելի նպատակային եւ մասնագիտական ուսումնասիրությունը, քանի որ ՀՀ վերլուծական եւ լրատվական դաշտում Ադրբեջանում «հոլանդական հիվանդության» սկսվելու մասին տարածված մտքերն արտացոլում են զարգացումների ընդամենը մի մասը:

**ԱՄՆ–ԻՐԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
Դավիթ Յովհաննիսյան**

Միացյալ Նահանգների քաղաքական ընտրանու ներսում պետության եւ հասարակության առջեւ կանգնած մի շարք կարեւորագույն խնդիրների վերաբերյալ մշտապես գոյություն ունեցող անհամաձայնությունը ներկայումս ձեռք է բերել ծայրաստիճան սուր բնույթ, ինչը հանգեցրել է այնպիսի վիճակի, երբ գործադիր իշխանությունը, այդ թվում՝ երկրի նախագահը, գործնականում ի վիճակի չէ ընդունել իր տեսակետից անհրաժեշտ որոշումներ:

ԱՄՆ Կոնգրեսի խոսնակ Նենսի Փելոսին վերջերս հայտարարել է, որ Սպիտակ տունը չի կարող առանց Կոնգրեսի համաձայնության ռազմական գործողություններ սկսել Իրանի դեմ, իսկ Կոնգրեսը նման համաձայնություն մտադիր չէ տալ, նույնիսկ եթե նախագահ Ջորջ Բուշը նման հարցով դիմի այս մարմնին: Միաժամանակ, բազմաթիվ ամերիկյան թինք թանքերի եւ վերլուծական կենտրոնների հրապարակումներում շեշտվում են այն վտանգները, որոնց առջեւ կկանգնի աշխարհը, եթե միջուկային զենքի տարածման վերաբերյալ ներկայումս գործող արգելքները վերացվեն: Նույն ժամանակ Իսրայելի օդուժը ռմբակոծում է սիրիական մի օբյեկտ, որի տարածքում, համաձայն ամերիկյան եւ իսրայելական զաղտնի ծառայությունների տեղեկությունների, կառուցվում էր միջուկային ռեակտոր, իսկ Սիրիայի նախագահ Բաշար Ասադի խոսքերով՝ «նախկինում ռազմական նպատակների համար ծառայող, սակայն ներկայումս չգործող արտադրություն է եղել»:

Անշուշտ, Միջին Արեւելքի նման տարածաշրջանում, որտեղ թե՛ բացահայտ եւ թե՛ թաքնված բնույթ ունեցող կոնֆլիկտները բազմաթիվ են, իսկ պատերազմական գործողությունները գրեթե չեն ընդհատվում, միջուկային զենքի տարածման հիմնահարցը ձեռք է բերում չափազանց վտանգավոր բնույթ: Միաժամանակ, նավթի եւ գազի պահանջարկի կտրուկ աճի պայմաններում էժան միջուկային էներգիա արտադրելու մտադրությունը շատ բնական է, հատկապես այնպիսի երկրների համար, որոնք ածխաջրածնային վառելիքի մեծ պաշարներ չունեն:

Այս առումով Իրանի միջուկային ծրագրերը, որոնց իրականացումն

արդեն հասել է այն փուլին, որից հետո միջուկային զենք արտադրելը տեխնիկական բարդություններ չի ներկայացնի, առաջացնում է բազմաթիվ հարցեր, քանի որ Իրանի տարածքում են գտնվում համաշխարհային գազի պաշարների 16 տոկոսը եւ նավթի՝ 10 տոկոսը:

Մյուս կողմից, Իրանը տերություն է, որն իր ազդեցությունն ունի թե՛ միջինարեւելյան, թե՛ Պարսից ծոցի, թե՛ Կենտրոնական Ասիայի եւ թե՛ Հարավային Կովկասի տարածաշրջաններում: Այն իր տարածքով 17-րդն է աշխարհում, բնակչության քանակով՝ 18-րդը, ՀՆԱ ծավալով՝ 19-րդը, նավթի արտահանման ծավալներով՝ 4-րդը: Իրանի հարեւանությամբ կան մի քանի պետություններ, որոնք ունեն միջուկային զենք, ընդ որում՝ Իսրայելի միջուկային զենքն իրանական կողմը գնահատում է որպես իր անվտանգության անմիջական սպառնալիք: Այս ամենն օբյեկտիվորեն կարող էր հիմք հանդիսանալ, որպեսզի Իրանի ղեկավարությունը նախաձեռներ միջուկային զենքի արտադրման ծրագրերի իրականացումը, սակայն այն կտրուկ հակազդեցությունը, որը միասնականորեն հանդես բերեցին Միացյալ Նահանգները, Եվրամիությունը, Ռուսաստանը եւ Չինաստանը, այսինքն՝ «միջուկային ակումբի» բոլոր անդամները, ստիպեց Իրանի հոգեւոր առաջնորդ այաթոլլա Խամենեյին եւ երկրի նախագահ Ահմադինեժադին հայտարարել, որ իրենց երկիրը միջուկային զենք ստեղծելու «ծրագիր չի իրականացրել եւ չի իրականացնելու»: Հասկանալի է, սակայն, որ եթե Իրանը ինքնուրույն իրականացնի ուրանի հարստացման իր ծրագիրը, ապա ոչինչ չի խանգարի նրան անցնել միջուկային զենքի արտադրմանը, ուստի նման հայտարարությունները չեն կարող պատասխանել բոլոր ծագող հարցերին, հատկապես այն դեպքում, երբ Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը Իրանի հետ բանակցություններում դեռեւս չի հասել այս պետության միջուկային ծրագրերի նկատմամբ ամբողջական վերահսկման եւ թափանցիկության իրականացմանը:

Փաստորեն, ստեղծվել է բավական բարդ վիճակ, քանի որ ՄԱԿ-ում Միացյալ Նահանգների եւ Մեծ Բրիտանիայի կոշտ դիրքորոշմանը եւ նրանց առաջարկներին՝ ավելի խիստ պատժամիջոցներ կիրառել Իրանի նկատմամբ, հակադրվում են Ռուսաստանը եւ Չինաստանը, ԱՄՆ քաղաքական էլիտայում եւս կան խիստ տարածայնություններ այս հիմնախնդրի վերաբերյալ. իրավիճակը Իրաքում եւ Աֆղանստանում ստիպում է ամերիկյան վարչակազմին որոշակի համագործակցության հնարավորություններ որոնել եւ օգտվել այս երկրներում Իրանի ունեցած ազդեցությունից եւ հնարավորություններից, ինչը հատկապես կարեւոր-

վում է Թուրքիայի եւ Միացյալ Նահանգների միջեւ հարաբերությունների լարվածության եւ Պակիստանում տեղի ունեցող իրադարձությունների անկանխատեսելիության ֆոնին: Բաղդադում ԱՄՆ եւ Իրանի դեսպանների բանակցությունների երկու փուլերից հետո, որոնց ընթացքում քննարկվել են հիմնականում տեխնիկական բնույթի խնդիրներ, գործընթացը կարող է կամ խորանալ, եւ այս դեպքում բանակցությունների ընթացքում քննարկվող հարցերը շատ ավելի լուրջ բնույթ կկրեն, կամ էլ, ելնելով ընդհանուր մթնոլորտից, ժամանակավորապես դադարեցվել, քանի որ առջեւում են 2008թ. ԱՄՆ նախագահի եւ Իրանի պառլամենտական ընտրությունները, որոնցից մեծապես կախված է, թե ինչ բնույթ կունենան այս պետությունների իշխանությունները:

Սակայն եթե պատկերացնենք, որ բանակցությունների մակարդակը բարձրացվում է եւ ձեւաչափը՝ փոխվում, ապա ի՞նչ փիլիսոփայական եւ ինտելեկտուալ հիմք դրանք կարող են ունենալ այն պայմաններում, երբ մի քանի տասնամյակների ընթացքում իրար վրա են կուտակվել ոչ միայն երկկողմ հարաբերությունների բազմաթիվ հակասություններ եւ լուծում չունեցող հարցեր, այլ նաեւ արմատացել է նույնիսկ իրար լսելու եւ հասկանալու հնարավորությունը մերժող, այսպես կոչված, «քաղաքակրթությունների բախման» տեսությունը: Տեսություն, համաձայն որի՝ արեւմտյան եւ իսլամական քաղաքակրթությունները պետք է բախվեն. տեսություն, որը կոչված էր հիմնավորելու Միացյալ Նահանգների «միաբեւեռության» սկզբունքի վրա հիմնված քաղաքականությունը:

Մեր տեսակետից, ներկա պայմաններում, երբ գրեթե անհավանական է դարձել հիմնահարցի ռազմական ճանապարհով լուծումը եւ, մյուս կողմից, չափազանց հրատապ է միջուկային զենքի տարածման հնարավորությունը կանխելու խնդիրը, միակ հնարավոր ուղին մնում է իրանա-ամերիկյան հարաբերությունների էության սկզբունքային փոփոխությունը, որը կարելի է իրականացնել մի քանի մակարդակների վրա լայնածավալ բանակցային գործընթաց սկսելով: Բանակցությունները քաղաքական գործիչների եւ դիվանագետների միջեւ անպտուղ կլինեն, եթե նախապատրաստված չլինեն երկու հասարակություններում հարգանք եւ հեղինակություն ունեցող ինտելեկտուալների հանդիպումներով, քանի որ հիմնական խնդիրները, որոնք իմաստ ունի քննարկել այս դեպքում, աշխարհայացքային բնույթ ունեն:

Չարկ է նշել, որ ներկայումս երկու հասարակությունների ներսում տեղի են ունենում այնպիսի գործընթացներ, որոնք ավելի հավանական են դարձնում փոխըմբռնումը եւ արտահայտած տեսակետների նկատմամբ

հանդուրժողականությունը: Մասնավորապես, ամերիկյան հասարակության արձագանքները, որոնք հնչեցին Իրանի նախագահ Ահմադինեժադի Միացյալ Նահանգներ կատարած ուղեւորությունից հետո, վկայում են այդ մասին: Միաժամանակ, վերջին շրջանում Իրանում տեղի ունեցած ուսանողական բողոքի ցույցերը նույնպես վկայում են, որ Իրանի Իսլամական Հանրապետությունում քաղաքական բեմ է դուրս գալիս նոր սերունդ, որի տեսակետները խիստ տարբերվում են ներկայիս քաղաքական ղեկավարության տեսակետներից:

Հարցը շատ հստակ է ձևակերպված. եթե ոչ պատերազմ եւ ոչ էլ միջուկային զենքի տարածում, ապա ի՞նչ: Միակ տրամաբանական այլընտրանքը բանակցություններն են եւ փոխզիջումների ճանապարհով հարաբերությունների կարգավորումը:

ԵՎՐՈՊԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՍԼԱՄԻ ՄԻՋԵՎ Արաքս Փաշայան

Պատմական տեւական ժամանակահատվածի ընթացքում ճակատագրով եւ ավանդույթներով միմյանցից տարբեր եվրոպական ազգերին միավորող քրիստոնեության հիմնարար արժեքներն այսօր եվրոպայում գրեթե մոռացության են մատնված: Քրիստոնեությունը՝ որպես եվրոպային բնորոշ քաղաքակրթական համակարգ, հայտնվել է խոր ճգնաժամի մեջ, ինչի ապացույցը քրիստոնեական արժեհամակարգին մարտահրավեր նետած, նրան լրիվ հակոտնյա (նյութապաշտական, էսակենտրոն եւ գեոցենտրական) արդի արեւմտյան մտայնությունն է: Հիշյալ իրողություններին զուգահեռ՝ եվրոպայում աննկատ չի մնում հարաճուն իսլամականացումը, ինչը սպառնում է մայրցամաքի ինքնության հետագա պահպանմանը:

Ընդամենը մի քանի տասնամյակ առաջ եվրոպացիները մեծ ոգեւորությամբ էին ընդունում էժան աշխատուժ համարվող մահմեդական էմիգրանտներին: Սակայն երբ եվրոպայում ծնելիության մակարդակն անկում ապրեց՝ հասնելով ամենացածր ցուցանիշների, եվրոպան հայտնվեց ներգաղթածներից կախվածության մեջ: Մայրցամաքում (Ռուսաստանը ներառյալ) այսօր տարբեր տվյալներով ապրում է մոտ 50 մլն մահմեդական (տե՛ս աղյուսակը): Ի դեպ, նրանց մեծ մասը պայքարում է եվրոպայում շարիաթական ինստիտուտների ներդրման համար: Տարբեր կանխատեսումներով՝ եվրոպայի մահմեդական բնակչությունը մոտակա տասնամյակում կկրկնապատկվի, եվրոպայի առանձին քաղաքներում բնակչության կեսից ավելին կլինեն մահմեդականներ:

Աշխարհամասի ապագա իսլամականացման հեռանկարը ոտքի է հանել եվրոպայի աջ պահպանողականությանը, որն այսօր՝ լիբերալ-դեմոկրատական համակարգի ճգնաժամի եւ ձախ գաղափարների որոշակի արժեզրկման պայմաններում, վերելք է ապրում: Աջ պահպանողականների դիրքերը հատկապես ուժեղացրին հայտնի «ծաղրանկարային պատերազմը», իսլամ բնակչության հուզումները ֆրանսիայում եւ Հռոմի պապի աղմկահարույց ելույթի առիթով մահմեդականների ձեռնարկած գործողությունները:

Եվրոպական պահպանողականների գործողությունները, սակայն, չեն արժանանում հանրության մեծ մասի, մասնավորապես՝ իշխանությունների հավանությանը: Բելգիական «Ֆլամանդական շահ» աջ կուսակցությունը, օրինակ, մեղադրվում է ռասիստական գաղափարների քարոզչության մեջ: Քաղաքական այդ ուժը կոչ է անում Բելգիայից վտարել գործազուրկ մահմեդականներին եւ զրկել իսլամը պետության կողմից հովանավորվող կրոնի կարգավիճակից, քանի որ այն խորթ է մայրցամաքի բնակիչներին եւ սպառնում է նրանց: Նրանք հայտարարում են, որ գոյություն չունեն համամարդկային ընդհանրական արժեքներ, այլ կան այս կամ այն քաղաքակրթությանը բնորոշ արժեքներ: Նմանօրինակ երեւույթների մասին բարձրաձայնելը Եվրոպայում դիտվում է որպես ռասիզմ եւ ծայրահեղականություն, քանի որ արդի եվրոպական քաղաքական համակարգը ստեղծվել է ազատական եւ ձախ քաղաքական գաղափարների հիմքի վրա:

Արեւմտյան Եվրոպա

| <i>Երկիրը</i> | <i>Բնակչությունը</i> | <i>Մահմեդականների թվաքանակը</i> | <i>Մահմեդականների թվաքանակը</i> |
|------------------|----------------------|-------------------------------------|-------------------------------------|
| Ֆրանսիա | 56 576 000 | 5 500 000 | 9.72 |
| Գերմանիա | 79 113 000 | 3 200 000 | 4.04 |
| Մեծ Բրիտանիա | 57 236 000 | 1 700 000 | 2.97 |
| Իտալիա | 57 739 000 | 1 000 000 | 6.08 |
| Յուգոսլավիա | 14 805 000 | 900 000 | 6.04 |
| Բելգիա | 9 928 000 | 600 000 | 4.69 |
| Շվեդիա | 8 526 000 | 400 000 | 5.89 |
| Շվեյցարիա | 6 796 000 | 400 000 | 0.98 |
| Իսպանիա | 38 869 000 | 380 000 | 5.25 |
| Ավստրիա | 7 624 000 | 400 000 | 6.90 |
| Յունաստան | 10 140 000 | 700 000 | 2.34 |
| Դանիա | 5 130 000 | 120 000 | 0.80 |
| Ֆինլանդիա | 4 974 000 | 40 000 | 4.29 |
| Ընդհանուր | 357 456 000 | 15 340 000 | 4.29 |

Արեւելյան Եվրոպա

| <i>Երկիրը</i> | <i>Բնակչությունը</i> | <i>Մահմեդականների թվաքանակը</i> | <i>Մահմեդականների տոկոսը</i> |
|------------------|----------------------|-------------------------------------|----------------------------------|
| Ռուսաստան | 142 386 000 | 21 000 000 | 14.75 |
| Ուկրաինա | 51 704 000 | 2 000 000 | 3.87 |
| Ռումինիա | 23 152 000 | 120 000 | 0.52 |
| Բուլղարիա | 8 976 000 | 2 600 000 | 28.97 |
| Լեհաստան | 37 932 000 | 20 000 | 0.05 |
| Հունգարիա | 10 590 000 | 80 000 | 0.76 |
| Բելառուս | 10 200 000 | 80 000 | 0.78 |
| Մոլդովա | 4 341 000 | 25 000 | 0.58 |
| Մերձբալթիկա | 7 700 000 | 35 000 | 0.45 |
| Ալբանիա | 3 200 000 | 2 400 000 | 75.00 |
| Բոսնիա | 4 479 000 | 2 200 000 | 49.12 |
| Կոսովո | 2 283 000 | 2 000 000 | 87.60 |
| Մակեդոնիա | 2 111 000 | 500 000 | 23.69 |
| Խորվաթիա | 4 683 000 | 400 000 | 8.54 |
| Սլովենիա | 1 948 000 | 250 000 | 12.83 |
| Սերբիա | 9 830 000 | 800 000 | 8.14 |
| Ընդհանուր | 325 515 000 | 34 510 000 | 10.60 |

Այս տեսանկյունից հետաքրքրական է 2007թ. սեպտեմբերին Եվրոպայի իսլամականացման դեմ Բրյուսելում` Եվրախորհրդարանի շենքի առաջ տեղի ունեցած չարտոնված ցույցը: Նախօրեին կազմակերպիչների հայտարարած քսան հազար մասնակիցների փոխարեն ցույցին մասնակցում էին մոտ մի քանի հարյուր մարդ: Ցույցն արտոնված չէր, քանի որ Բրյուսելի սոցիալիստ քաղաքագլուխը, խորհրդակցելով բելգիական ոստիկանության եւ հատուկ ծառայությունների ներկայացուցիչների հետ, անթույլատրելի էր համարել մահմեդականների հարցում արմատական գաղափարներով աչքի ընկնող աջ կուսակցություններին նման միջոցառում կազմակերպել: Իսկ վերջիններիս չէր հաջողվել դատարանում վիճարկել մերժումը:

Ցույցը սկսելու պահից ի վեր մասնակիցները չէին հասցրել նույնիսկ բարձրաձայնել իրենց կարգախոսները, երբ ոստիկանները, որոնք թվով գրեթե հավասար էին մասնակիցներին, ձերբակալեցին հարյուրից ավելի մարդկանց: Ձերբակալվածների մեջ էին նաև «Ֆլամանդական շահ» կուսակցության Եվրախորհրդարանի անդամներ:

Ցույցի կազմակերպիչների համար անընդունելի է այն փաստը, որ Եվրամիության մայրաքաղաքում կարելի է արգելել Եվրոպացիներին համատեղ հավաքվել՝ «Ոչ Եվրոպայի իսլամականացմանը» կարգախոսով ցույց կազմակերպել, խոսել Եվրոպայում իսլամականացման սպառնալիքի մասին: Իսկ Բրյուսելի քաղաքագլուխը, կազմակերպիչներին բնորոշելով որպես ռասիստ, հիշեցրել է, որ միայն բելգիական մայրաքաղաքում բնակչության 1/5-ը մահմեդականներ են: Քաղաքագլխի ընդդիմախոսները վստահ են, որ վերջինս հակաիսլամական ցույցն արգելել է մահմեդական ընտրազանգվածին չկորցնելու համար:

Եվրոպայի իսլամականացման մասին Արեւմուտքում շատ հաճախ գերադասում են չխոսել՝ չնայած այն հանգամանքին, որ ամեն օր Եվրոպան բախվում է ինտեգրման խնդիրներ ունեցող մահմեդականների հետ, որոնց թիվն օր օրի ավելանում է: Դրան զուգահեռ՝ նվազում է քրիստոնյաների թիվը:

Եվրոպայում քրիստոնեության նահանջը շատ ակնհայտ է դարձել: Սոցիոլոգիական հարցախույզի տվյալներով՝ ամենաշատ անհավատներ այսօր կան Շվեդիայում եւ Նորվեգիայում: Այս երկրներում բնակչության միայն 11 տոկոսն է այցելում եկեղեցի: Ֆրանսիայում վերջին 30 տարիների ընթացքում հավատացյալների բացակայության պատճառով փակվել է ամեն երկրորդ եկեղեցին: Քրիստոնեական վանքերն ու եկեղեցիները մնում են դատարկ, դրանցից շատերը վաճառքի են հանվում կամ էլ տրվում են վարձակալության տարաբնույթ ընկերությունների, իսկ եկեղեցու առաջնամասում կախվում է տվյալ ընկերության գովազդը: Այժմ Ամստերդամի հնագույն վանքերից մեկում ապրում են Աֆրիկայից եկած մահմեդականներ: Հենց քրիստոնեական եկեղեցիներից մեկում է գտնվում Ամստերդամի ամենահայտնի դիսկոտեկներից մեկը՝ Պարադիզոն (դրախտ):

Վերջին տարիներին Հոլանդիայում եկեղեցիների առքուվաճառքը սովորական երեւույթ է դարձել: Նույնիսկ կան անշարժ գույքի գործակալներ, ովքեր զբաղված են միայն եկեղեցիներով: Ամենաուշագրավը, թերեւս, այն է, որ եկեղեցու զնորդներ կարող են դառնալ մահմեդականները, իսկ այդ դեպքում եկեղեցին, ամենայն հավանականությամբ,

կվերածվի մզկիթի, ինչի օրինակները նույնպես Եվրոպայում բավական շատ են: Սակայն անկախ այս երեւոյթից, Եվրոպական քաղաքներում մզկիթները զգալի թիվ են կազմում եւ ավելանալու միտում ունեն:

Այսպիսով, Եվրոպայում քրիստոնեւոյթյան բացը ներկայումս լրացնելու է գալիս իսլամը, որի հոգեւոր-բարոյական արժեքներն, ի տարբերոյթուն քրիստոնեականի, այսօր առավել կենսունակ են: Առկա ժողովրդագրական միտումները նույնպես խոսում են հօգուտ իսլամի: Սույն հանգամանքը բերել է նրան, որ այսօր Եվրոպան դարձել է իսլամի եւ քրիստոնեւոյթյան դեռեւս խուլ պայքարի ասպարեզ: Քաղաքակրթական ու ժողովրդագրական բնույթ ունեցող այդ պայքարը խոստանում է լինել ամենաարտառոցներից մեկը նոր ժամանակների պատմւոյթյան մեջ:

ՊԱՏՐԻԿ ԲՅՈՒՔԵՆԵՆ. «ԱՐԵՎՍՈՒՏՔԸ ՄԱՅԱՆՈՒՄ Է ՆԵՐՍԻՑ»

Ամերիկյան քաղաքական գործիչ **Պատրիկ Բյուքենենը** 1966–1973թթ. եղել է նախագահ Ռիչարդ Նիքսոնի խորհրդականն ու ծառագիրը, իսկ 1985–1987թթ. Ռոնալդ Ռեյգանի վարչակազմում զբաղեցրել է հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավարի պաշտոնը: Երկար տարիներ նա Հանրապետական կուսակցության անդամ էր, սակայն ի վերջո հեռացավ նրա շարքերից: Ներկայիս հանրապետականները, որոնց Բյուքենենը համարում է նեոպահպանողականներ, նրան կոչում են հնապահպանողական (պալեոկոնսերվատոր):

Ստորև ներկայացնում ենք հատվածներ «Պրոֆիլ» հանդեսին Պ.Բյուքենենի տված հարցազրույցից:

Հարց– Ինչո՞ւն եք Դուք տեսնում ԱՄՆ ներկայիս արտաքին քաղաքականության գլխավոր տարբերությունը սառը պատերազմի ժամանակների քաղաքականությունից:

Պատ.– Սառը պատերազմի ընթացքում կար համոզմունք, թե խորհրդային կայսրությունն ու կոմունիզմը սպառնալիք են ներկայացնում արեւմտյան աշխարհին՝ ընդհանրապես եւ Միացյալ Նահանգներին՝ մասնավորապես: Մենք ղեկավարվում էինք զսպման գլոբալ ռազմավարությամբ: Սակայն մեզնից նրանք, ովքեր իրենց համարում էին ավանդապահ, համոզված էին, որ եթե խորհրդային կայսրությունը փլուզվի եւ կարմիր բանակը վերադառնա տուն, մենք պետք է փակենք արտասահմանի մեր հեռակայանները եւ վերադարձնենք զորքերը Միացյալ Նահանգներ: Ներկայիս վարչակազմի արտաքին քաղաքականությունը հակասության մեջ է սույն հայեցակարգի հետ: Դա ինտերվենցիոնիստական քաղաքականություն է, որը սկզբնավորվել է Վուդրո Վիլսոնի ժամանակներից: Այն նպատակ է դրել վերակառուցել աշխարհը՝ ելնելով ամերիկյան պատկերացումներից, եւ պատրաստ է օգտագործել մեր ողջ հարստությունն ու իշխանությունը, որպեսզի դա անի:

Հարց – Ի՞նչ է, Ձեր կարծիքով, նեոպահպանողական շարժումը:

Պատ. – Նեոպահպանողականները եղել են դեմոկրատներ՝ տրոցկիստներ, սոցիալիստներ, ձախեր, ազատականներ: Նրանք բոլորն էլ եղել են Դեմոկրատական կուսակցությունում: Դեմոկրատական կուսակցությունը 1972թ. ընտրարշավին պաշտպանել է Ջորջ Մաքհովերնին (որը պարտվել է): Մենք պահպանողականներ էինք: Ես աշխատում էի Նիքսոնի մոտ, երբ մենք հաղթեցինք 49 նահանգներում: Այդ ժամանակ ապագա նեոպահպանողականները Դեմոկրատական կուսակցությունից անցան մեզ մոտ: Դա տեղի ունեցավ միայն այն ժամանակ, երբ մենք եկանք իշխանության: Նրանք հիմնականում նյու-յորքյան ինտելեկտուալներ էին: Նրանք սառը պատերազմի կողմնակիցներ էին՝ հակակոմունիստական եւ իսրայելամետ տրամադրություններով: Եվ մենք ընդունեցինք նրանց, քանզի հակակոմունիզմը հենց այն էր, որը համախմբում էր պահպանողական շարժումը: Եվ նրանք ձուլվեցին պահպանողական շարժմանը, ու դա շատ ողջունվեց այնպիսի մարդկանց կողմից, ինչպիսին ես էի: Սակայն հետզհետե, ցանց ստեղծելու իրենց ընդունակության շնորհիվ, նրանք սկսեցին տնօրինել կուսակցության ֆոնդերը եւ ֆինանսավորել պահպանողական հանդեսներն ու գիտական կենտրոնները: Նրանք եկան պահպանողականության նոր սահմանման՝ նեոպահպանողականության:

Ի՞նչն է տարբերությունը: Նեոպահպանողականությունը՝ արտաքին քաղաքականության ինտերվենցիոնիզմի եւ ներքին քաղաքականության ազատականության յուրօրինակ խառնուրդ է: Հին պահպանողականությունը – հոսանք, որին պատկանում են ես – պետության նվազագույն միջամտություն է, արտաքին քաղաքականություն, որը հետամուտ է ուժեղ պաշտպանությանը, սակայն, միաժամանակ, ենթադրում է, որ Ամերիկային հարկ չկա միջամտել այլ երկրների գործերին, խառնվել բոլոր պատերազմներին: Ներկայումս պահպանողական շարժման ներսում պայքար է գնում նեոպահպանողականների եւ ավանդական պահպանողականների միջեւ: Նեոպահպանողականներն այժմ գտնվում են պաշտպանվողների վիճակում: Այն, ինչ կատարվում է Մերձավոր Արեւելքում, նրանց համար աղետ է: Նրանք չեն հասկանում, որ Մերձավոր Արեւելքում ամերիկյան արտաքին քաղաքականությունը պետք է տարբերվի իսրայելյան արտաքին քաղաքականությունից:

Նրանք վիստնականներ են: Դա վիստնական գաղափար է, թե Ամերիկան պետք է աշխարհը դարձնի անվտանգ, որ նա չի կարող իրեն

անվտանգ զգալ ոչ ժողովրդավարական աշխարհում: Դրանք ամենեւին էլ պահպանողական գաղափարներ չեն: Նրանք նեոյակոբիներ են: Ինչպես ֆրանսիական հեղափոխության առաջնորդները, նրանք չեն վստահում գաղափարներին, եթե իրենց չի հետեւում ողջ աշխարհը: Նրանք խորապես անհանդուրժողական են: Եվ նրանք կարող են այս երկրին պատճառել բազում անախորժություններ՝ մինչ ստիպված կլինեն հեռանալ: Ներկայումս նրանք խուլ պաշտպանությունում են, որովհետեւ պարզվեց, որ Իրաքը կայսերական չհաջողված միջոցառում էր: Նրանց հաջորդ նախագիծը՝ Միացյալ Նահանգներն Իրանի հետ պատերազմի մեջ ներքաշելն է: Նրանք միայն էսկալացիայի հաշվին կարող են արդարացում գտնել:

Ավանդական պահպանողականների խնդիրն է կանգնեցնել արկածախնդրությունն Իրաքում, դուրս բերել զորքերը, հեռացնել այնտեղից նավատորմը, եւ թող իրենք իրենց խնդիրները լուծեն: Ես կարծում եմ՝ նեոիմպերիալիզմը, որը հանդիսանում է պատերազմի պատճառ, ծնում է ահաբեկչություն:

Հարց – Այսինքն՝ սեպտեմբերի 11-ը Մերձավոր Արեւելքում ամերիկյան քաղաքականության հետեւա՞նքն էր:

Պատ. – Եթե մենք այնտեղ չլինեինք, նրանք այստեղ չէին լինի:

Հարց – Այսպիսով, արդի ամերիկյան քաղաքականության արատը, Ձեր տեսակետից, հանդիսանում է ժողովրդավարությունն աշխարհում ուժով տարածելու ձգտումը: Ձեր «Արեւմուտքի վախճանը» գրքում Դուք կասկածի ենթարկեցիք ժողովրդավարության ժամանակակից հայեցակարգի հիմնավորվածությունն ու խորքայնությունը: Ո՞րն է նրա թուլությունը:

Պատ. – Իմ կարծիքով, ժողովրդավարությունը համակարգ է, որն ընդունված քաղաքական որոշումների եւ առաջնորդների վերարտադրության գործընթացում բավական երկար ժամանակահատված աշխատել է Ամերիկայի համար: Այն միավորել է երկիրը: Սակայն ես համարում եմ, որ կան շատ ավելի խորքային արժեքներ – ընկալումը, թե որն է ճիշտ, որը՝ սխալ, որն է ճշմարտությունը, որը՝ կեղծիք – որոնք պետք է պահպանվեն հասարակությունում, որոնք անհրաժեշտ է պաշտպանել: Այն, ինչ կատարվում է երկրի ներսում, սոցիալական ու բարոյական հեղափոխության հետեւանք է, որը մենք վերապրել ենք: Այս հեղափոխությունը, թերեւս, առավել էական է, քան ֆրանսիականը, թեպետ եղել է խաղաղ: Նա վերացրել է ավանդական հավատալիքներն

ու արժեքները, պատկերացումները՝ թե ինչ է ճշմարտությունը, ամեն ինչ գլխիվայր շրջել է: Օրինակ, սեռական խնդիրների ոլորտում: Այն, ինչ տեղի է ունենում ամերիկյան հասարակությունում, դա գաղափարների ընդունումն է, որոնցից մենք սովոր ենք ամաչել եւ ընկալում ենք որպես մեղք: Ամերիկայում յուրաքանչյուր օր գրանցվում է շուրջ 4 հազ. արհեստական վիժում: Նրանց համար, ովքեր իրենց համարում են դեմոկրատներ, դա սոցիալական առաջընթաց է: Մեզ համար դա նշանակում է Արեւմուտքի վախճան: Մենք ոչնչացնում ենք այդ չժնված երեխաներին: Եվ նրանք ամերիկյան հասարակությունում փոխարինվում են օրինական եւ անօրինական գաղթյալներով երրորդ աշխարհի երկրներից: Եվ ես չեմ կարծում, թե Ամերիկյան կկարողանա գոյատևել ընթացիկ հարյուրամյակում, եթե շարունակի շարժումն այդ ուղղությամբ:

Ժողովրդավարության գաղափարն անհնարին է պարտադրել իսլամական աշխարհին, որն ավանդապաշտ է, մերժում է եկեղեցու անջատումը պետությունից, մերժում է գաղափարը, թե բոլոր կրոնները հասարակությունում պետք է ունենան հավասար իրավունքներ: Միացյալ Նահանգները պետք է դուրս բերի իր գործերն այդ երկրներից եւ թողնի իրենք որոշեն իրենց ճակատագիրը:

Հարց – Ժողովրդագրական անկումը սպառնալիք ներկայացնո՞ւմ է Արեւմուտքին:

Պատ. – Արեւմուտքը մահանում է ներսից: Չկա որեւէ արեւմտյան երկիր, ներառյալ Ռուսաստանը, որտեղ բնիկ ազգաբնակչությունն արտադրի բավականաչափ երեխաներ, որպեսզի գոյատևի: Որպեսզի կարողանալ գոյատևել որպես հասարակություն եւ պետություն, յուրաքանչյուր կին պետք է ունենա միջինը 2.1 երեխա: Ոչ մի արեւմտյան երկիր չունի այդպիսի ցուցանիշներ: Ռուսաստանը տարեկան կորցնում է 1 մլն մարդ: Կաթոլիկ Իտալիայում եւ Իսպանիայում, որտեղ ծնելիության մակարդակը բարձր է, քան մյուս արեւմտյան երկրներում, երեխաներ ծնվում են ոչ ավելի այն թվի կեսից, որը բավարար կլինի հասարակությունը պահպանելու համար:

Բոլոր արեւմտյան երկրները, ներառյալ Միացյալ Նահանգները, եթե խոսենք սպիտակ բնակչության մասին, այժմ աստիճանաբար մահանում են: Երբ քաղաքացիների մեծ մասը ծերանում է եւ գնում թոշակի, տնտեսական բեռն ընկնում է երիտասարդ բնակչության վրա, որն այն պարզապես չի տանի: Մենք արդեն Գերմանիայում եւ հին Եվրոպայի մյուս երկրներում տեսնում ենք սոցիալական նպաստների կրճատում:

Դա, մասնավորապես, տեղի է ունենում նաև Ռուսաստանում: Այդ հասարակություններում այն տեղերը, որոնք ազատ են մնում մահացածների եւ չծնվածների պատճառով, լրացվում են իսլամական աշխարհից, իսկ Արեւմտյան Եվրոպայի դեպքում՝ Աֆրիկայից գաղթյալների զանգվածային ներխուժմամբ: Այդ մարդիկ այլ մշակույթների ներկայացուցիչներ են, որոնք դեռ չեն ծուլվել արեւմտյան հասարակության մեջ: Եվ դա այդ հասարակության տրոհման ու Արեւմուտքի վախճանի սկիզբն է:

Երբ ես 2001թ. գրում էի գիրքը, մտածում էի, թե ռուսները Յեռավոր Արեւելքում այնքան են, որքան չեխերը Չեխիայի Յանապետությունում, բայց հետո պարզեցի, որ վերջին 4-5 տարիներին այդ տարածաշրջանում մոտավորապես 2 մլն ռուս է մահացել, միլիոնային ժամանակ՝ 3 մլն չինացի հաստատվել է այնտեղ: Ես կարծում եմ, թե Ռուսաստանը, որը կորցրել է երկրի մեկ երրորդը, ժամանակի ընթացքում կկորցնի նաև Յեռավոր Արեւելքի կեսը, որը բնակեցվում է չինացիներով: Եթե խոսենք Արեւմուտքի ճակատագրի երկարաժամկետ կանխատեսումների մասին, մենք Միացյալ Նահանգներում կտեսնենք այն, ինչը ոմանք անվանում են «Մեքսիկացիներ»՝ մեքսիկացիների եւ ամերիկացիների միություն, Եվրոպայում կաճի իսլամականացման գործընթացը: Եվ դա անխուսափելի է: Ես կարծում եմ, որ Ռուսաստանում կգերակշռեն կովկասյան ու միջինասիական ժողովուրդները, որոնց ծնելիության մակարդակն աներեւակայելիորեն բարձր է:

Արեւմուտքը մահանում է: Առայժմ նա ապրում է քաղցր կյանքով, սակայն 21-րդ դարում մենք կտեսնենք Արեւմուտքի մայրամուտը, արեւմտյան ժողովուրդների փաստացի անհետացումը, որոնք 19 եւ 20-րդ հարյուրամյակներում գերիշխում էին ողջ աշխարհում: Դա զարմանալի է: Ես ուսումնասիրել եմ վիճակագրական տվյալները. 1950թ. մենք՝ արեւմտյան սպիտակամորթներս, ներառյալ ռուսները, կազմում էինք աշխարհի բնակչության 35%-ը, 1960-ին՝ 25%-ը: Ներկայումս մենք 16% ենք, 21-րդ հարյուրամյակի կեսերին կլինենք սոսկ 10%: Եվ դա կլինի երկրագնդի ամենատարեց 10%-ը:

Չարք – Դուք չե՞ք կարող առավել մանրամասն կանգ առնել ժամանակակից աշխարհի համար կրոնների կարեւորության հարցի վրա:

Պատ. – Արեւմուտքը ծնվել է քրիստոնեությունից: Գաղափարների մեծ մասն Արեւմուտք է եկել Երուսաղեմից ու Սուրբ Երկրից. գաղափարներ, թե մարդն Աստծո ստեղծածն է, որ նա անկախ է, ունի իրավունքներ, ունի հոգի, որ գոյություն ունեն պետության իշխանության սահմանափակումներ. ընտանիքի, երեխաների արժեքի անձնա-

կան արժանապատվության եւ ազատության գաղափարներ: Դրանք գաղափարներ են, որոնք քրիստոնեությունից եկան Զոմենական կայսրություն ու նրա անկումից հետո դարձան այն հիմքը, որը մենք կոչում ենք արեւմտյան քաղաքակրթություն: Եվ բացարձակ ճիշտ կլինի ասել, որ եթե մեռնում է հավատքը, մեռնում են մշակույթը եւ քաղաքակրթությունը: Այժմ մեռնում է քրիստոնեությունը ողջ Եվրոպայում, ու նրա հետ մեռնում է մշակույթը եւ արեւմտյան քաղաքակրթությունը: Ահա թե ինչ է կանգնած արեւմտյան ժողովուրդների ֆիզիկական մահվան հետեւում: Նրանք զրկվել են այն մտահորիզոնից, որը տվել է իրենց քրիստոնեական աշխարհայացքը: Նրանք ապրում են ներկա պահով. գեղոնիզմը, ինդիվիդուալիզմը, ամերիկյան երազանքի տարրերը վարակել են այս աշխարհի մարդկանց:

Չարք – Ամերիկյան երազանքը սպանո՞ւմ է Արեւմուտքը:

Պատ. – Ամերիկյան միշտ եղել է բախտավոր ու հաջող պետություն, եթե խոսենք քաղաքացիների կենսամակարդակի մասին: Մինչ Երկրորդ աշխարհամարտը եւ անգամ դրանից հետո Ամերիկյան խորապես քրիստոնեական պետություն էր. առավելապես բողոքական: Սակայն 50-ական թվականներին կաթոլիկ եկեղեցին նույնպես ընդարձակվեց եւ մեծացավ շուրջ 2 անգամ: Դրա հետ էր կապված այդ տարիներին ապահարզանների թվի կրճատումը:

Այնուհետեւ այս երկիրն ապրեց սոցիալական, բարոյական եւ մշակութային հեղափոխություն, որն իր էությամբ հակաքրիստոնեական էր՝ անհատապաշտական, գեղոնիստական եւ մատերիալիստական: Նրա հիմքում դրված էին ֆրանսիական հեղափոխության գաղափարները: Այդ հոսանքն առաջին հերթին ընդգրկեց համալսարանները, հետո՝ ամերիկյան վերնախավերը եւ, վերջապես, մարտահրավեր նետեց Ամերիկայում գերիշխող մշակույթին:

Ներկայումս Միացյալ Նահանգները՝ երկու երկիր է: Խոսում են «կարմիր» եւ «կապույտ» նահանգներից: Այն մարդիկ, որոնք շաբաթը մեկ անգամ կան ավելի հաճախ են այցելում եկեղեցի, քվեարկում են հանրապետականների օգտին: Նրանք, ովքեր երբեք եկեղեցի չեն հաճախում, գրեթե միշտ քվեարկում են դեմոկրատների օգտին: Ես գտնում եմ, որ այս հեղափոխությունն ընդգրկել է ամերիկյան վերնախավերը, բոլոր արեւմտյան երկրները, նախեւառաջ՝ Եվրոպան:

Չարք – Ամերիկյան զանգվածային մշակույթի էքսպանսիան պատճառներից մեկն է, որի համար առավել ավանդական հասարակու-

թյուններն ատում են Արեւմուտքին: Կարող եք Դուք այդ երեւոյթն անվանել մշակութային իմպերիալիզմ, որն այժմ հարվածում է իրեն ծնած հասարակոյթանը:

Պատ.– Միանգամայն ճիշտ է: Պատասխան հակազդեցոյթունը 60-ականների մշակութային հեղափոխոյթանը եղավ պահպանողական հոսանքը, որին ես պատկանում եմ: Սոցիալական պահպանողականոյթունը՝ դա հակազդումն է Զոլիվուդի մշակութային գերիշխանոյթանն ու մեզ օտար այն արժեքներին, որոնք նա պարտադրում է: Ավանդական պահպանողական քրիստոնեական հասարակոյթունն այդ արժեքներին դիմակայում է տարբեր մեթոդներով: Քրիստոնեական ընկերակցոյթան ներկայացուցիչները վերցնում են իրենց երեխաներին պետական վարժարաններից, նրանք այլեւս չեն հաճախում կինոթատրոններ, ջանում են ազատվել հեռուստացուցից, երեխաներին սովորեցնում են տանը: Ուշագրավ է ավանդական իսլամական ընկերակցոյթունների հակազդեցոյթունն այդ ախտին, որը տարածվում է նաեւ իրենց երկրներում: Այդ հակազդեցոյթունն Արեւմուտքի ու Միացյալ Նահանգների դեմ է:

Ի հավելումն մշակութային եւ բարոյական իմպերիալիզմի, այժմ երեւան է գալիս մեկ այլ իմպերիալիզմ՝ ամերիկյան ռազմական իշխանոյթունը եւ քաղաքական գերակայոյթունը:

Չարց– Ինչպե՞ս եք դուք տեսնում Ռուսաստանի հետ Արեւմուտքի համագործակցոյթունը:

Պատ.– Ուղղափառները, բողոքականները եւ կաթոլիկները, իմ կարծիքով, կազմում են արեւմտյան քաղաքակրթոյթունը: Անշուշտ, վերահաս ճգնաժամի համատեքստում ես Ռուսաստանը տեսնում եմ որպէս Արեւմուտքի մաս: Նրա մոտ նույն խնդիրներն են, ինչ մյուս արեւմտյան երկրներում. բնակչոյթան կրճատում, հավատքի կորուստ, գեղոնիզմի եւ մատերիալիզմի գրոհ:

«Պրոֆիլ», N 33, 2007

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

| | |
|---|-----------|
| Գագիկ Տեր-Չարությունյան ԱՐԵՎՍՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ | 1 |
| Ռուբեն Մելքոնյան 20-րդ դարի ենիշերիները. ԽԵՂՎԱԾ ՃԱԿԱՏԱԳՐԵՐ | 5 |
| Գրիգոր Աղաբալտյու ՄԱՅՐԻՎ, ՄԵՆՔ ՀԱՅ ԵՆՔ | 11 |
| Սարգիս Չարությունյան ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ | 15 |
| Անուշ Հովհաննիսյան ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՃԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ | 23 |
| Սեւակ Սարուխանյան ԱԴՐԲԵՋԱՆ–ԹՈՒՐՔԻԱ. ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ | 28 |
| Դավիթ Հովհաննիսյան ԱՄՆ–ԻՐԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ | 33 |
| Արաքս Փաշայան ԵՎՐՈՊԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՍԼԱՄԻ ՄԻՋԵՎ | 37 |
| Պատրիկ Բյուքենեն «ԱՐԵՎՄՈՒՏՔԸ ՄԱՀԱՆՈՒՄ Է ՆԵՐՍԻՑ» | 42 |

*Շապիկի վրա պատկերված է
Արարատը՝ արեւմուտքից*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Սելիք-Աղանյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՄՍ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: